ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ (ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ 2015-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ

ԱՐՄԱՎԻՐ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	**ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**	3
2.	**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**	4
3.	**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	6
4.	**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ**	8
4.1.	Կրթություն	8
4.2.	Մշակույթ	14
4.3.	Սպորտ և երիտասարդության հարցեր	19
4.4.	Առողջապահություն	22
4.5.	Սոցիալական պաշտպանություն, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն	26
5.	**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**	32
6.	**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	37
7.	**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ**	42
8.	**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ**	44
9.	**ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**	47
9.1.	Ճանապարհաշինություն, տրանսպորտային ենթակառուցվածքներ	47
9.2.	Ջրամատակարարում	49
9.3.	Գազամատակարարում	51
9.4.	Էնեգետիկա	52
10.	**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**	52
10.1.	Տարածքային կառավարում	52
10.2.	Տեղական ինքնակառավարում	59
10.3.	Քաղաքացիական հասարակություն	62
11.	**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	66

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԿԶԾ	- Կայուն զարգացման ծրագիր
ՄԶԾ	- մարզի զարգացման ծրագիր
ԱՄՆ	- Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՎԾ	- Ազգային վիճակագրական ծառայություն
ՏԻՄ	- տեղական ինքնակառավարման մարմին
ՀԿ	- հասարակական կազմակերպություն
ՋՕԸ	-ջրօգտագործողների ընկերություն
ՊՓԲԸ	- պետական փակ բաժնետիրական ընկերություն
ՓԲԸ	- փակ բաժնետիրական ընկերություն
ՊՈԱԿ	- պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԾՏԳ	-սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՓՄՁ	- փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	-փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ	- փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման մարզային խորհուրդ
ՀԱԷԿ	- Հայկական ատոմային էլեկտրակայան
ՏԱՊ	- տարեկան աշխատանքային պլան
ՄԳ	- մոնիտորինգ և գնահատում
ՄԻԱՎ/ՁԻԱՎ	- մարդու իմունային անբավարարության վիրուս /ձեռքբերովի իմունային անբավարարության հիվանդություն
ԶԼՄ	- զանգվածային լրատվության միջոց

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման միջանկյալ (կիսամյակային) հաշվետվությունը կազմվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հունիսի 03-ի N 108 որոշմամբ ստեղծված մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից:

Ծրագրի ընդհանուր բնութագիրը

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1458-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը: Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 12-ի թիվ 134-Ա հրամանի հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016 թվականի տարեկան աշխատանքային պլանը ըստ համապատասխան հավելվածների:

ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Հնարավոր բոլոր ռեսուրսների համախմբումը ՄԶԾ-ով նախատեսվող 2016թ. իրականացվելիք միջոցառումների իրականացման համար
2) Նախատեսվող միջոցառումների շաղկապումը ՄԶԾ-ի արդյունքների հետ՝ «տրամաբանական հենքի» համակարգի օգնությամբ
3) Միջոցառումների իրականացման ցուցանիշների և արդյունքների ներառումը տրամաբանական հենքում
4) Հնարավորության դեպքում միջոցառումների իրականացման ժամկետների՝ ըստ եռամսյակների և դրանց իրականացման համար պատասխանատու կազմակերպությունների սահմանումը
5) Դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունների սահմանումը:

ՏԱՊ-ի իրագործման ընթացքում ակնկալվում է 2016 թվականի կտրվածքով ստանալ հետևյալ հիմնական արդյունքները.

Մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում

1) Բնակչության եկամուտների աճ և մարդկային աղքատության կրճատում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
6) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
7) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
8) Տարածքային կառավարման արդյունավետության բարձրացում
9) Մարզպետարանի կարողությունների ուժեղացում
10) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
11) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդարձակում

12) Հանրային կառավարման համակարգում հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորում
13) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում
14) Տեղեկատվության ազատության աստիճանի բարձրացում:

Ծրագրի ֆինանսավորումը

ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրագործման համար պահանջվող ֆինանսական միջոցները և նրանց ծախսման ուղղությունները գնահատված են՝ պահանջվող ընդհանուր գումարը 2015-2018թթ. կազմել է ավելի քան 128,6մլն.դրամ:

2016թ. ՀՀ Արմավիրի մարզի բոլոր ոլորտների կարիքների գնահատումը կազմել է 39,379,885.1հազ.դրամ որից՝

պետական բյուջե	18,358,245.1 հազ.դրամ
-սեփական միջոցներ	2,448,945.1 հազ.դրամ
-վարկային միջոցներ	15,909,300.0 հազ. դրամ
համայնքային բյուջե	891,420.0հազ.դրամ
մասնավոր ներդրողներ	7,111,500.0 հազ.դրամ
այլ աղբյուրներ	13,018,720.0 հազ. դրամ

2016թ. բոլոր ոլորտների իրական ներդրումների չափը կազմել է 9,843,250.9 հազ.դրամ, որից՝

-պետական բյուջե	4,472,870.0 հազ.դրամ
-սեփական միջոցներ	1,504,870.2 հազ.դրամ
-վարկային միջոցներ	2,968,000.0 հազ.դրամ
• միջազգային կազմակեր-պություններ և դոնորներ	66,760.7 հազ.դրամ
• համայնքային բյուջե	882,420.0 հազ.դրամ
• մասնավոր ներդրողներ	4,421,200.0 հազ.դրամ

ՄԶԾ-ի և ՏԱՊ-ի տարբերությունը կազմում է՝ -29,536,634.2հազ.դրամ:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի կատարվել են շուրջ 506,707.8հազ. դրամի ծրագրեր, որից՝

-պետական բյուջե	**94,593.8**հազ.դրամ
-սեփական միջոցներ	93,558.1հազ.դրամ
-վարկային միջոցներ	1,035.7հազ.դրամ
• միջազգային կազմակեր-պություններ և դոնորներ	150,106.4հազ.դրամ
• համայնքային բյուջե	262,007.7հազ.դրամ

2015 թվականի տարեկան աշխատանքային պլանով նախատեսված և 01.07.2016թ. դրությամբ իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 1-ում:

ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. առաջին կիսամյակի գնահատված կարիքների և տարեկան աշխատանքային պլանի փաստացի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հավելված 2-ում:

Ծրագրի մոնիտորինգի և գնահատման հայեցակարգը

ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է 4 հիմնական բաղադրիչներից.

1) Քաղաքականության ուսումնասիրում

2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
3) Մասնակցային մոնիտորինգ և գնահատում
4) Ազդեցության գնահատում:

Ծրագրի հաշվետվության կառուցվածքը

ՄԶԾ միջանկյալ (կիսամյակային) հաշվետվության ոլորտային բաժինների կառուցվածքը բաղկացած է չորս հիմնական բաժիններից.

1) Քաղաքականության վերլուծություն
2) Իրականացման առաջընթացը
3) Խնդիրները
4) Քաղած դասերը և հետագա քայլերը:

Քաղաքականության վերլուծություն. Այստեղ ամփոփվել են ոլորտի համար տարվա կտրվածքով առաջարկված ցուցանիշները և միջոցառումները:

Իրականացման առաջընթացը. Այս բաժնում նշվել են 2016 թվականի առաջին կիսամյակի ձեռքբերումները և դրանք կապվել ՏԱՊ-ի արդյունքային ցուցանիշների հետ:

Խնդիրները. Այստեղ նկարագրվել են տարվա ընթացքում ծագած յուրահատուկ խնդիրները և խոչընդոտները:

Քաղած դասերը և հետագա քայլերը. Այս բաժինը բացահայտում է հետագա այն խնդիրները, որոնք բյուջեի և պլանավորման գործընթացի հիմքը կհանդիսանան:

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1. Քաղաքականության վերլուծություն

Արդյունաբերության ոլորտի զարգացմանը խթանելու, արտադրական հզորությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման նպատակով 2016թ.առաջին կիսամյակում ևս նախատեսվում է շարունակել հետևյալ միջոցառումների իրականացումը.

1) արդյունաբերական ներուժի ճիշտ գնահատում և միջազգային փորձի ուսումնասիրություն
2) մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտահանման ներուժի բացահայտում և խթանում
3) արդյունաբերական ձեռնարկություններին որակյալ աշխատուժի (բանվորական) ապահովման նպատակով մարզում միջին մասնագիտական և արհեստագործական հաստատությունների ստեղծման ուղղությամբ հետազոտությունների իրականացում
4) ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինում
5) միջազգային շուկայում տնտեսության այլ ճյուղերում ոլորտի արտադրանքի և ծառայությունների ներդրում
6) մարզի մի շարք համայնքներում պտղի և բանջարեղենի վերամշակման փոքր արտադրությունների հիմնման և զարգացման գործընթացին օժանդակում
7) պահածոների դիվերսիֆիկացիայի և նոր արտադրատեսակների (մսի, ձկնամթերքի, սնկի և այլ պահածոների, մրգի) ներկայացման գործընթացին օժանդակում
8) խաղողի մթերման ծավալների ավելացում (օժանդակել մարզում խաղողագործության ոլորտի զարգացմանն ու ծավալային աճին՝ շեշտը դնելով հատուկ տեխնիկական տեսակների ավելացման վրա), այս առաջարկությունը բխում է մարզում բազմաթիվ մթերողների առկայությունից և մթերման պատրաստակամությունից
9) Հայաստանում (մարզում) ձկան կերերի արտադրության հիմնման հնարավորության ուսումնասիրում, ինչը թույլ կտա նվազեցնել ձկան ինքնարժեքը

10) մարզում ձկան վերամշակման (պահածոների արտադրություն, ձկան սառեցում, չորացում, ծխեխաշում և այլն) արտադրության ստեղծմանն օժանդակում՝ նախապես իրականացնելով իրագործելիության հետազոտությունը:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը՝

1) ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն է մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են գյուղմթերքների վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունն ու հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի նրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում:

Այս նպատակներին հասնելու համար կարևորվում է ՓՄՁ ՀԱԿ-ի Արմավիրի մարզի ներկայացուցչությունների, մարզպետարանի, մարզի խորհրդի, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների անմիջական աջակցությունն ու մասնակցությունը գործընթացին:

Կարևոր է շեշտը դնել հատկապես ՓՄՁ աջակցության տարեկան պլանում գյուղական համայնքների շահառուների տեսակարար կշռի մեծացման վրա:

Առաջարկվում է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երին և համայնքների գործարար ներկայացուցիչներին:

3.2. Իրականացման ձեռքբերումները

Մարզի համայնքների սանիտարական մաքրման և աղբահանության վիճակի վերահսկման նպատակով հանձնարարական-գրություն է ուղարկվել բոլոր համայնքներին և պարբերաբար ստուգայցեր են կատարվում համայնքներ:

Մարզպետարանը համագործակցում է ՓՄՁ ՀԱԿ-ի Արմավիրի մասնաճյուղի հետ:

Արդյունաբերության, բնակարանային կոմունալ և անշարժ գույքի կադաստրի բնագավառում հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել և համակարգվել է ենթակառուցվածքների, արդյունաբերական ձեռնարկությունների և անշարժ գույքի կադաստրի գործունեությունը:

Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքով նախատեսված գործառույթների պահանջների պարտադիր կատարման նպատակով՝ համակարգվել է համայնքների կողմից ստուգումների և հսկողության արդյունքների իրականացումը և ամփոփ տեղեկատվության ապահովումը:

ՄԶԾ-ով 2016թ. ՓՄՁ ոլորտի կարիքների գնահատումը կազմում է 5,180,000.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումների իրատեսական բյուջեն մասնավոր ներդրողների միջոցներով կազմում 4,120,000.0հազ. դրամ:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ծրագրեր չեն իրականացվել:

3.3. Խնդիրները

Վերոնշյալ ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Արմավիրի մարզում դեռևս ցածր է ՓՄՁ սուբյեկտների տարածաշրջանային ընդգրկվածությունը: Շարունակում է խնդիր մնալ սկսնակ գործարարների և գյուղական համայնքների ներգրավվածությունը աջակցության ծրագրերում:

3.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

ՓՄՁ աջակցման ծրագրի արդյունավետ շարունակությունը կարևոր նախադրյալ կհանդիսանա մարզում մասնավոր հատվածի զարգացման ռազմավարության մշակման համար:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

4.1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

4.1.1 Քաղաքականության վերլուծություն

2016թվականին ևս կրթության ոլորտի ռազմավարական մոտեցումները կիրառվելու են Արմավիրի մարզում, մասնավորապես՝ ՀՀ կառավարության կողմից առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնածրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները:

Այդ միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել մարզային առանձնահատկությունները:

Կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2016թ. ևս ուշադրություն է դարձվելու կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին: Անհրաժեշտ է նաև իրականացնել հատուկ կրթական և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական համակարգում ինտեգրելուն ուղղված համապատասխան միջոցառումներ:

Շարունակվել են դպրոցների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման, դպրոցների, որպես ինքնակառավարման մարմինների, ուժեղացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացման ծրագրերը:

4.1.2 Իրականացման առաջընթացը

Մարզում գործում են մարզային ենթակայության 91 միջնակարգ, 21 հիմնական և 2 հատուկ դպրոցներ, քաղաքային և գյուղական 62 մանկապարտեզ, որոնցում գործում են 189 խումբ՝ 5178 երեխաներով: 205-2016 ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կազել է 31610, որից 3738 առաջին դասարանցիներ: Մարզի աշակերտների թիվն աճել է 1071-ով, որից 428-ը՝ առաջին դասարան ընդունվածներն են: Պետական բուհական ընդունելության քննությունների արդյունքում մարզի շուրջ 585 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բուհեր: Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդել է 2845 ուսուցիչ, որոնցից 12-ը ստացել են տարակարգ, մեկ ուսուցիչ արժանացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ կոչման: Ատեստավորվել են 471 ուսուցիչներ, 2016թ.

վերապատրաստվել են ևս 428 ուսուցիչներ, որոնց ատեստավորումից հետո կավարտվի ատեստավորման հնգամյա ծրագիրը:

Ներառական կրթություն են իրականացրել 23 դպրոցներ՝ 735 երեխաների համար:

2015-2016 ուսումնական տարում ևս 2 դպրոցներում սահմանված կարգին համապատասխան պատրաստվել են զենքի պահպանման սենյակները, միացվել են պահպանման ձայնաազդանշանային համակարգերը: Ներկայում մարզի 97 դպրոցներ ապահովված են ուսումնական զենքով:

«Դպրոցական սնունդ» ծրագրում ընդգրկված են 40 դպրոցներ, տարրական դասարանների 5578 աշակերտներով:

Գազով լոկալ ջեռուցում ունեն մարզի 88, իսկ հեղուկ վառելիքով ջեռուցվում են 20, էլեկտրականությամբ՝ 6 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքների գազաֆիկացմանը զուգահեռ լոկալ ջեռուցմամբ ապահովել մարզի մյուս դպրոցները:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը կազմում է 8,849,957.5հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումների իրատեսական բյուջեն կազմում է շուրջ 416,658.8 հազ.դրամ, մասնավորապես՝

Համայնքային բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել շուրջ 138,000.0հազ. դրամի ծրագրեր:

Ընդհանուր առմամբ 2016թ. այլ աղբյուրներով իրականացվող ծրագրերի խնդիրը (7,603,140.0հազ.դրամ) բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ոլորտում փաստացի կատարվել են շուրջ 206,969.9 հազ.դրամի ծրագրեր:

Աղյուսակ 1. Կրթության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Կրթության ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	*Թիրախ 2015-2018թթ.*	*Կարևոր նախադրյալներ*
Ոլորտային նպատակ. Բարձրացնել Արմավիրի մարզի կրթության որակը	1. Մարզի տարածքում գործող ուսումնական հաստատությունների ատեստավորված ուսուցիչների տեսակարար կշիռը, %, 2. Բուհեր, միջին մասնագիտական և այլ ուսումնական հաստատություններ ընդունված սովորողների տեսակարար կշիռը, %, 3. Մանկավարժական կադրերի ատեստավորումը, տարակարգ ունեցողների թիվը, մարդ	*20%* *20-25%* *6*	*Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է*
1. Կրթության ոլորտի կառույցների շենքային պայմանների բարելավում			
1.1. Հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Շենքային պայմանները բարելավված հաստատությունների թիվը	*10*	*Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է*
1.2. Հաստատությունների ջեռուցման պայմանների բարելավում	Գազով (լոկալ ջեռուցում) ջեռուցվող հաստատությունների թիվը	*5*	*Ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է*
2. Կրթության ոլորտի կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացում			

2.1. Կրթություն իրականացնող հաստատությունների համակարգչային տեխնիկայով հագեցում և համացանցային կապով ապահովում	*Հաստատություններում նոր համակարգիչների թարմացման ցուցանիշը* *Կայուն համացանցային կապ ունեցող ուսումնական հաստատությունների թիվը, %*	5% 100%	Մարզում գործող ուսումնական հաստատությունները շահագրգռված են փոխանակել իրենց տեղեկատվությունը
2.2. Դպրոցների ուսումնական լաբորատորիաների և կաբինետների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով և գույքով	*Հաստատություններում նոր լաբորատոր սարքավորումների տեսակարար կշիռը, %*	*5%*	
3. Կրթության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում և ատեստավորում			
3.1. Մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստում և ատեստավորում	*Դասընթացներին մասնակցածների և ատեստավորվածների տեսակարար կշիռը, %*	20%	Մանկավարժական աշխատանք կատարողները ցանկություն ունեն զարգացնելու սեփական հմտությունները
4. Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում			
4.1.Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում	*Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած դպրոցների տնօրենների տեսակարար կշիռը, %*	100%	
5. Ներառական կրթության համակարգի զարգացում			
5.1.Հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում	Կրթական հաստատություններում սովորող հատուկ կրթության և առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը	130-150	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում			
6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը Նոր բացվող դպրոցահեն նախակրթարանների թիվը	2 -	
6.2. Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների տեսակարար կշիռը, %	10%	

4.1.3. Խնդիրները

Չնայած ՀՀ կառավարության կողմից ոլորտում իրականացվող բարեփոխումներին և ձեռքբերումներին, դեռևս դանդաղ է ընթանում դպրոցների հիմնանորոգման, նյութատեխնիկական բազայի արդիականացման և հագեցվածության գործընթացը,

մասնավորապես՝ գյուղական դպրոցների լաբորատոր սարքավորումներով, որակյալ ինտերնետ կապով, կոշտ գույքով ապահովվածությունը, ուտի և դանդաղում է ուսման որակ և մատչելիություն ապահովելուն ուղղված գործընթացը:

4.1.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Ոլորտի առջև կանգնած խնդիրների լուծումը հրատապ է և պահանջում է լուրջ ֆինանսական միջոցներ: Դպրոցների ուսումնական զենքի զետեղարանների (պահասենյակների) «Զենքի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան ստեղծելու և կահավորելու գործընթացը գտնվում է ավարտման փուլում: Այն ավարտին հասցնելու համար պահանջում է ֆինանսական ներդրումներ, որն անհրաժեշտ է իրականացնել բացառապես ՀՀ պետական բյուջեի հաշվին:

4.2. ՄՇԱԿՈՒՅԹ

4.2.1. Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Արմավիրի մարզի մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիր:

2016թ. ՄԶԾ-ով առաջարկվում է լուծել մշակույթի տների ջեռուցման խնդիրը, բարելավել գրադարանային պայմանները, ապահովել թանգարանների հավաքածուների անվտանգությունը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում ստեղծել կայուն ջերմախոնավային պայմաններ:

Մարզում մշակույթի ոլորտի զարգացման հիմնական գերակայություններն են՝

1) Մարզի մշակութային կյանքի զարգացում՝ պետական աջակցության ընդլայնմամբ
2) Ոլորտի կադրերի պատրաստում, վերապատրաստում և վերարակավորում
3) Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում
4) Մշակութային կազմակերպությունների շենքերի և շինությունների հիմնանորոգում
5) Պատմական հուշարձանների պահպանություն, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում
6) Սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում, երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

4.2.2 Իրականացման առաջընթացը

ՀՀ Արմավիրի մարզում առկա է

- 85 մշակույթի տուն,
- 102 գրադարաններ, որոնցից 1-ը ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ, 12-ը քաղաքային, 89-ը՝ գյուղական: Գրադարանային ֆոնդը կազմում է 1162750 կտոր գիրք:
- 8 թանգարան,
- Մարզի 15 համայնքներում գործում է 20 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոց,
- 1 արվեստի քոլեջ,

Մարզի թվով 15 երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում սովորող 163 աշակերտների ուսման վարձավճարի փոխհատուցման համար նախատեսված գումարը 2016թ. համար կազմել է 43478,0 հազ.

դրամ: ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Արմավիրի մարզի պետական ցուցակը ներառում է 186 հուշարձան՝ 121 պահպանական միավորով, որոնք տեղաբաշխված են մարզի 58 համայնքներում, որոնց պահպանության և օգտագործման ուղղությամբ կատարվել են ՀՀ օրենսդրությամբ մարզպետարանին վերապահված լիազորություններն ու գործառույթները:

ՀՀ Արմավիրի մարզում մշակութի և սպորտի բագավառներում պետական և մարզային միջոցառումների ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տարբեր մշակութային, կրթական, մարզական և հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր, տիկնիկային ներկայացումներ, տարբեր թեմաների և գիտության տարբեր բնագավառներին նվիրված զրույցներ: Մարտ ամսվա ընթացքում մարզային գրադարանում կազմակերպվեցին Հովհաննես Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառումներ, այդ թվում՝ գրքերի նվիրատվություն, դասախոսություններ, հեքիաթների բեմադրություններ: <<Թումանյանական շաբաթ>> կազմակերպվեց մարզի գրադարաններում, մշակույթի տներում և հանրակրթական դպրոցներում:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կազմակերպվող՝ Սփյուռքի երիտասարդների՝ ***«Արի տուն» հայրենաճանաչության ծրագրի իրականացման նպատակով*** 2016թ. ՀՀ Արմավիրի մարզպետի շրջաբերական գրությամբ ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն է ուղարկվել մարզի քաղաքային և Երևան քաղաքին մոտ գտնվող գյուղական համայքներին և ուսումնական հաստատություններին՝ հյուրընկալող ընտանիքներ հավաքագրելու առաջարկով: Ներկայումս ընտանիքներից ընդունվում են հայտադիմումները, որոնք կամփոփվեն և կտրամադրվեն ՀՀ Սփյուռքի նախարարությանը:

Մարզի մշակույթի բնագավառների ներկայացուցիչները մասնակցել են հանրապետական և միջազգային մրցույթների ու առաջնությունների՝ արժանանալով մրցանակների ու խրախուսանքի: Աջակցություն է ցուցաբերվել մարզի տարածքում ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների, զանգվածային միջոցառումների կազմակերպմանը: Մարզում ավանդաբար նշվում են նաև այնպիսի սիրված և ժողովրդի կողմից ընդունված ավանդական տոներ և ծեսեր, ինչպիսիք են՝ Ս. Սարգսի տոն, Տյառնընդառաջ, Ծաղկազարդ, Ս. Հարություն, Վարդավառը, Խաչվերացը, Սրբոց Թարգմանչաց տոները: Կազմակերպվել են դպրոցականների, երիտասարդների ուխտագնացություններ՝ դեպի Բագարանի Ս. Շուշանիկ, Գանձասար, Նորավանք, Հաղարծին, Օշական, Հառիճի, Շուշիի Ս. Ղազանչեցոց, Սպիտակավոր եկեղեցիներ, Տաթևի վանական համալիր:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը կազմել է 1,281,663.6հազ. դրամ: 2016թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է 195,863.6հազ. դրամ:

Համայնքային բյուջեներով իրականացվող ոլորտային ծրագրեր 123,300.0հազ. դրամ գումարով:

2016թ. այլ աղբյուրներով իրականացվող ծրագրերի խնդիրը (1,062,500.0հազ.դրամ) բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ոլորտում փաստացի կատարվել են շուրջ 115,398.2հազ. դրամի ծրագրեր, ինչպես պետական բյուջեի, այնպես էլ համայնքային բյուջեի միջոցներով:

Աղյուսակ 2. Մշակույթի ոլորտի զարգացման տրամաբանական հենքը

Ռազմավարության նպատակների և առաջնահերթ ծրագրերի ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	*Թիրախ 2015-2018թթ.*	*Կարևոր նախադրյալներ*
Մշակութային հաստատությունների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում			
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում, վերանորոգում	Հիմնանորոգված, վերանորոգված մշակութային օբյեկտների թիվը	*3-5*	
Պատմամշակութային արժեքների պահպանում և վերականգնում	Վերականգնված, կառուցված պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների թիվը	*3*	3
Մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային մշակութային միջոցառումների թիվը	*տարեկան 50-60* *տարեկան շուրջ 250-300*	20-25 100
	Համայնքային մշակութային միջոցառումների թիվը	*տարեկան 200-300 մարդ*	15
	Միջազգային, հանրապետական և մարզային մրցույթներում, փառատոներում հաղթող մասնակիցների թիվը	*տարեկան 20000-25000 մարդ* *տարեկան 180000-200000 մարդ*	2000 1500
	Թանգարաններ, ցուցահանդեսների այցելուների քանակ տարեկան կտրվածքով		
	Գրադարաններ այցելուների քանակ տարեկան կտրվածքով	*տարեկան շուրջ 150000 մարդ*	5000-6000
	Պետական, ազգային տոներին, մարզային տոնախմբություններին մասնակիցների թիվը		
	Թատերական, տիկնիկային ներկայացումների քանակը	*տարեկան 30-50*	18
	Թատերական միջոցառումների մասնակիցների քանակը	*տարեկան 15000-20000*	70000

4.2.3. Խնդիրները

Չնայած իրականացված աշխատանքներին դեռևս շարունակում է հրատապ մնալ մարզի մշակույթի և սպորտի, կրթական հաստատությունների վերանորոգման և համապատասխան գույքով ապահովման հարցը:

Մշակույթի ոլորտում հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների, ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ: Առաջնահերթ խնդիր է հանդիսանում նաև մասնագետ կադրերի սակավության և կադրերի վերապատրաստման խնդիր:

ՄԶԾ-ով առաջարկվել է լուծել մշակույթի տների ջեռուցման խնդիրը, բարելավել գրադարանային պայմանները, ապահովել թանգարանների հավաքածուների անվտանգությունը, ֆոնդապահոցներում և ցուցասրահներում ստեղծել կայուն ջերմախոնավային պայմաններ:

4.2.4. Քաղաք դասերը և հետագա քայլերը

Հաշվետու ժամանակահատվածում մարզի գյուղական և քաղաքային համայնքներում կազմակերպված մշակութային և սպորտային միջոցառումները էական ազդեցություն են թողել մարզի բնակչության գեղագիտական դաստիարակության, ազատ ժամանցի կազմակերպման, մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության վրա:

2016թ. կարևորվում է կազմակերպվող միջոցառումներին բնակչության ակտիվ մասնակցությունը, մասսայական մշակութային միջոցառումների կազմակերպումը և հոգևոր մշակութային կրթության ուղղությամբ աշխատանքների ակտիվացումը:

4.3. ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

4.3.1. Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Արմավիրի մարզը հանրապետության մարզական նվաճումներով աչքի ընկնող տարածաշրջաններից է:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնախնդիրները հետևյալն են՝

1) առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման նպատակով համայնքներում մարզահրապարակների և խաղահրապարակների խիստ սակավությունը

2) նախակրթարանների և ուսումնական հաստատությունների գերակշիռ մասում անհրաժեշտ պայմանների և մարզագույքի պակասը

3) շրջակա միջավայրի կանաչապատման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, հետիոտնի համար նախատեսված ճանապարհների ոչ բարվոք վիճակը

4) Մարզի բնակչության թվի համեմատ ոտքով և հեծանվով երթևեկողների ցածր տոկոսը

5) Ուսումնական հավաքներ կազմակերպելու, մրցումներին մասնակցելու, մարզագույք, անհրաժեշտ բուժսարքավորումներ և դեղորայք ձեռք բերելու համար մարզական կազմակերպություններում ֆինանսական միջոցների անբավարարությունը

6) Հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ մարզադահլիճների, մարզագույքի և այլ անհրաժեշտ պայմանների բացակայությամբ պայմանավորված պետական ուսումնական ծրագրի պահանջների ոչ լիարժեք իրականացումը

7) Հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների սակավությունը:

Երիտասարդության ոլորտում առկա խնդիրները տարաբնույթ են և բխում են հիմնականում սոցիալական անապահով պայմաններից՝ ներառելով հասարակության սոցիալական տարբեր խավերին բնորոշ հիմնական խնդիրները, դրանք են.

1) երիտասարդության բնակարաններով ապահովվածությունը
2) առաջնային առողջության պահպանումը
3) երիտասարդության սոցիալական երաշխիքները
4) երիտասարդության զբաղվածությունը
5) հանգստի և ազատ ժամանցի կազմակերպմանն առնչվող հարցեր
6) երիտասարդական միջոցառումների իրականացմանն ուղղված պետական միջոցների սղություն:

Մարզում պետական երիտասարդական քաղաքականությունն իրականացվում է պետական կառավարման մարմինների, ՏԻՄ-երի, բարձրագույն և միջին մասնագիտական

կրթական հաստատությունների, երիտասարդության հարցերով զբաղվող ՀԿ-ների և այլ մարմինների կողմից:

4.3.2 Իրականացման առաջընթացը

Հաշվետու կիսամյակի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից անցկացվել են պետական ծրագրերով, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատանքային ծրագրով նախատեսված և այլ միջոցառումներ, առաջնություններ, մրցաշարեր: Մարզում կազմակերպվել են ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված՝ դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերի դպրոցական, համայնքային և տարածաշրջանային փուլեր 6 մարզաձևերից, որոնց հաղթողները հունիսի 14-17-ը մասնակցեցին Արմավիր, Արթիկ և Գյումրի քաղաքներում անցկացված փնջային մրցումներին, <<ՀՀ Ազգային ժողովի գավաթի>> խաղարկության դպրոցական, տարածքային փուլերը: Մարտի 5-ին կայացած մարզային փուլում հաղթող ճանաչված՝ Հայթաղի միջակարգ դպրոցի թիմը կմասնակցի հանրապետական եզրափակիչ փուլին: Դպրոցականների շախմատի հանրապետական օլիմպիադայի մարզային փուլը, որի հաղթող ճանաչված՝ Վաղարշապատի N 12 հիմնական դպրոցի թիմը մայիսի 2-5-ը Երևան քաղաքում կայացած հանրապետական եզրափակիչ փուլում գրավել է 3-րդ տեղը:

Նորվեգիայում կայացած ծանրամարտի Եվրոպայի առաջնությունում Սամաղարի մարզադպրոցի սան Անդրանիկ Կարապետյանը դարձավ Եվրոպայի չեմպիոն, Վանիկ Ավետիսյանը արժանացավ փոքր բրոնզե, իսկ հայկաշենցի Սիմոն Մարտիրոսյանը՝ երկամարտի արդյունքով՝ բրոնզե մեդալի: Առաքել Միրզոյանը ՀՀ հավաքականին բերեց օլիմպիական վարկանիշային միավորներ: Մեդալակիրները մարզպետի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով և դրամական պարգևներով:

Մարզի նախադպրոցական հաստատություններում ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարության հետ համատեղ կազմակերպվեց «Սպորտլանդիա-2016» մարզական միջոցառումը, որին մասնակցեցին մարզի 25 նախադպրոցական հաստատությունների թիմեր: Հաղթող ճանաչված Լեռնագոգ համայնքի մանկապարտեզի թիմը հունիսի 20-ին մասնակցեց հանրապետական եզրափակիչ փուլին: Հունիս ամսին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայանացած Երիտասարդների աշխարհի առաջնությունում երկամարտի արդյունքում Սիմոն Մարտիրոսյանը դարձավ աշխարհի չեմպիոն:

2016 թվականին հունիսի 1-15-ը մարզում կազմակերպվեց և անցկացվեց ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային փուլը Արմավիր, Մեծամոր և Հայթաղ համայնքներում: 3 տարածքներում և 4 տարիքային խմբերում մրցույթին մասնակցեց 108 ընտանիք: Մրցույթի մարզային փուլին մասնակցեցին 36 ընտանիքներ: Հաղթող ճանաչված 12, ինչպես նաև մեկ հաշմանդամ ունեցող լավագույն մարզական ընտանիքներ հուլիսի 18-23-ը Ծաղկաձորում կմասնակցեն <<Լավագույն մարզական ընտանիք>> 2016 հանրապետական ստուգատեսի եզրափակիչ մրցումներին:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը կազմել է 724,080.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումների իրատեսական բյուջեն կազմել է 146,120.8հազ.դրամ, մասնավորապես.

Համայնքային բյուջեի միջոցներով իրականացվող ոլորտային ծրագրեր 5,500.0հազ.դրամ գումարով:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ իրականացվել են 36,378.8հազ. դրամի ծրագրեր:

Աղյուսակ 3. Սպորտի և երիտասարդության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Մարզական հաստատությունների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում			

Մարզական օբյեկտների ամրացում, հիմնանորոգում /վերանորոգում/	Հիմնանորոգված մարզական, օբյեկտների թիվը: Հիմնանորոգման ենթակա մարզական օբյեկտների թիվը	1	2-րդ կիսամյակ
Մարզական միջոցառումների կազմակերպում	Մարզային/համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ	40 2%	15 1

4.3.3. Խնդիրները

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման հիմնախնդիրները հետևյալն են՝

1) Մարզի ազգաբնակչության ֆիզիկական ակտիվության զարգացման, առողջության ամրապնդման և ֆիզիկական դաստիարակության անընդհատության ապահովման նպատակով համայնքներում մարզահրապարակների և խաղահրապարակների խիստ սակավությունը:

2) Ֆիզիկական ակտիվության զարգացման ապահովման համար նախակրթարանների և ուսումնական հաստատությունների գերակշիռ մասում անհրաժեշտ պայմանների և մարզագույքի պակասը:

3) Համայնքների հատակագծով նախատեսված շրջակա միջավայրի կանաչապատման, խաղահրապարակների, սպորտով զբաղվելու գոտիների, հետիոտնի համար նախատեսված ճանապարհների ոչ բարվոք վիճակը:

4) Գյուղական մասնավորապես սահմանամերձ համայնքներում մարզական կազմակերպությունների կամ դրանց մասնաճյուղ-խմբերի խիստ սակավությունը, անհրաժեշտ մարզագույքի բացակայությունը, բնակչության ֆիզիկական ակտիվության զարգացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:

5) Մարզի բնակչության թվի համեմատ ոտքով և հեծանվով երթևեկողների ցածր տոկոսը:

6) Ոտքով և հեծանվով երթևեկելու համար նախատեսված ճանապարհների, խաղահրապարակների, սահադաշտերի, լողավազանների, ֆիզկուլտուրայով և սպորտով զբաղվելու այլ հնարավորությունների ստեղծման համար ՀՀ պետական բյուջեից, համայնքների բյուջեներից հատկացվող միջոցների, հովանավորչական ծրագրերի սակավությունը:

7) Ուսումնական հավաքներ կազմակերպելու, մրցումներին մասնակցելու, մարզագույք և անհրաժեշտ բուժսարքավորումներ, դեղորայք ձեռք բերելու համար մարզական կազմակերպություններում ֆինանսական միջոցների անբավարարությունը:

8) Մարզական, մարզական-զանգվածային և բնակչության ֆիզիկական ակտիվության զարգացմանն ուղղված այլ միջոցառումների կազմակերպման համար մարզպետարանում ՀՀ պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցների չնախատեսումը:

9) Հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ մարզադահլիճների, մարզագույքի և այլ անհրաժեշտ պայմանների բացակայությամբ պայմանավորված պետական ուսումնական ծրագրի պահանջների ոչ լիարժեք իրականացումը:

10) Հաշմանդամների շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների սակավությունը:

4.3.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

2016 թվականի ընթացքում կարևորվում է կազմակերպվող մարզական միջոցառումներին պետական աջակցության ցուցաբերումը, մարզական-մասսայանակն միջոցառումների բնակչության ակտիվ մասնակցության ապահովումը:

Մարզի երիտասարդության տարաբնույթ խնդիրներին լուծումներ տալու առումով կարևորվում է մարզի մի շարք՝ առավել մեծ քաղաքային համայնքներում համայնքային

երիտասարդական կենտրոնների հիմնումը, սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում, երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու նպատակով:

4.4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

4.4.1. Քաղաքականության վերլուծություն

Բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶԾ-ի ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային օղակի պահպանման և շտապ բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տուբերկուլյոզի, մալարիայի, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և վարակիչ այլ հիվանդությունների կանխարգելման ուղղությունները:

ՄԶԾ-ում արտացոլված առողջապահության ոլորտի գերակայությունները ներառում են՝ համակարգի ֆինանսավորման աղբյուրների (պետական բյուջե, ապահովագրական հիմնադրամ, ուղղակի վճարումներ, համավճարներ) հզորացումը, բուժօգնության մատչելիությունը աղքատ և սոց.անապահով խավի համար, առողջապահության համակարգում ստվերային շրջանառության կրճատումը, պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդնումը, վերարտադրողական առողջության բարելավումը և ամբուլատոր պոլիկլինիկական օղակի հետագա զարգացումը:

2016 թվականի առաջին կիսամյակում ձեռնարկվել են միջոցառումներ մայրական մահերի բացառման, պերինատալ մահացության իջեցման, հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավման և հիվանդանոցային մահաբերության իջեցման ուղղությամբ:

4.4.2. Իրականացման առաջընթացը

Մարզի առողջապահական համակարգում գործում են 59 բուժհաստատություններ՝ 52 համայնքային ենթակայության և 7 մարզպետարանի ենթակայության, որոնցից երկուսը բժշկական կենտրոններ են, երկուսը՝ պոլիկլինիկաներ, մեկը՝ հիվանդանոց, մեկը՝ ծննդատուն /միավորման գործընթացում է/ և մեկը՝ մարզային արյան կայան: Մարզում հիվանդանոցային մահճակալների թիվը կազմում է՝ 389:

Մարզի բոլոր բուժհաստատություններում աշխատող բժիշկների ընդհանուր թիվը կազմում է՝ 397, միջին բուժանձնակազմի թիվը՝ 888: Մարզի ամբուլատոր համակարգն հիմնականում ապահովված է բժշկական և բուժքույրական կադրերով:

2016թ. գլոբալ բյուջեով մարզի առողջապահական հաստատություններին հատկացված է 2,974,340,456ՀՀ դրամ, որից համամասնորեն առ 11.07.2016թ. դրությամբ ֆինանսավորվել է 1,494,501,500ՀՀ դրամ:

2016թ. տարեսկզբում սեզոնային գրիպի բռնկումների հետ կապված մարզի բոլոր բուժհաստատությունները աշխատել են հատուկ ռեժիմով՝ ապահովելով ազգաբնակչությանը վարակից պաշտպանելու, արդեն հիվանդության դեպք ախտորոշելու պարագայում տամիֆլյու դեղորայքով ապահովելու, ծանր դեպքերը հոսպիտալացնելու, անհրաժեշտության դեպքում մարզից դուրս ճիշտ ժամանակին ուղեգրելու գործընթացը:

2016թ. շարունակվել է <<Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում>> եռամյա թիվ 5222-ԱՄ սկրինինգային ծրագիրը, որի շրջանակներում մարզի բուժհաստատությունների կողմից իրականացվել են հետևյալ հետազոտությունները՝ արյան մեջ գլյուկոզայի որոշում- 6673, արյան և մեզի ընդհանուր քննություն սկրինինգի շրջանակներում- 449, արգանդի վզիկի քսուսի ցիտոլոգիական հետազոտություն - 1648 կանանց մոտ:

Մարզպետարանի ենթակայության բոլոր բուժհաստատությունները ապահովված են անհրաժեշտ քանակությամբ հակափայտացման շիճուկով, հակաբոտուլինային շիճուկով, օձի

հակաթույնով, հակագանգրենոզ շիճուկով, հակափայտացման անատոքսինով, հակակատաղության վակցինայով, իսկ համայնքային բուժամբուլատորիաները թարմացրել են տարածաշրջանի բուժհաստատությունների հետ պայմանագրերը: 01.07.2016թ. դրությամբ մարզում գրանցվել են՝ օձի խայթոցի 11 դեպքեր, որոնցից ոչ մեկը մահվան դեպքով չի ավարտվել:

Մարզի շտապ օգնության 26 մեքենաներից 12-ը գտնվում են համայնքային բուժամբուլատորիաների հաշվեկշռում: Շտապ օգնության կանչերը իրականացվում են 14 շտապ օգնության բրիգադների կողմից, որոնք գործում են մարզպետարանի ենթակայության բուժհաստատություններում, որոնց կողմից 01.07.2016թ. դրությանբ կատարվել է 16263 կանչ:

01.07.2016թ. դրությամբ հաշվառման են վերցվել 1562 հղիներ: Ըստ ժամանակացույցի բոլոր հղիներին հատկացվել են ծննդօգնության պետական հավաստագրեր:

2016թ. առաջին կիսամյակում գրանցվել է 1125 ծնունդ, որից այլ մարզից 9 ծնունդ, տվյալ մարզից՝ 631 ծնունդ, Երևանում՝ 485 ծնունդ: Մարզի մահացության դեպքերը 01.07.2016թ. դրությամբ 18-ից բարձր կազմել են՝ 809 հիվանդներ, որից մարզի հիվանդանոցներում մահացել են 92 հիվանդներ և արձանագրվել է 0-18 տարեկան երեխաների մահացության՝ 8 դեպք, որից 0-1 տարեկան 4 երեխա, մայրական մահացության դեպք չի գրանցվել: Բնական աճը կազմել է՝ 316, մանկական մահացությունը կազմել է՝ 3.5 պրոմիլե:

2016թ. առաջին կիսամյակում Արմավիրի և Վաղարշապատի պոլիկլինիկաների կողմից հետազոտության նպատակով Երևան են ուղարկվել 1446 զորակոչիկներ, վճարվել է 1.002.400 ՀՀ դրամ ճանապարհածախս:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզի զորակոչիկների պատվաստումները իրականացվել են բարձր ընդգրկվածությամբ:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարան դիմած քաղաքացիներից պետպատվերի շրջանակներում բուժումը իրականացնելու համար մարզային հիվանդանոցներ են ուղեգրվել 24 հիվանդներ, ՀՀ ԱՆ է ուղարկվել 22 միջնորդագիր:

01.07.2016թ. դրությամբ կենտրոնական գնմամբ և մարդասիրական ճանապարհով տարբեր հիվանդությունների բուժման նպատակով ստացվել և մարզի բուժհաստատություններին է բաշխվել 100.600.395ՀՀ դրամ արժողությամբ տարբեր դեղամիջոցներ, որից հակադիաբետիկ դեղամիջոցներ՝ 44.191.031ՀՀ դրամ արժողությամբ, շաքարային դիաբետով հիվանդներին անհրաժեշտ դեղամիջոցները՝ ինսուլին և դեղահաբեր, հատկացվել են մեր կողմից ներկայացված պահանջին համապատասխան: Մարզում 01.07.2016թ. դրությամբ հաշվառված են 6500 դիաբետով հիվանդներ, որից միայն ինսուլին ստացող՝ 799, ինսուլին և հաբ ստացող՝ 395, միայն հաբ՝ 5306 հիվանդներ:

2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշմամբ մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի շրջանակներում՝ «Վաղարշապատի ծննդատուն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպման գործընթացում է միացվելու է «Վաղարշապատի պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը դառնալով <<Էջմիածին ԲԿ>> ՓԲԸ/05.05.2016թ. N 458-Ն որոշում/:

01.07.2016թ. թիվ 01./17.1/2362-16 գրությանբ մարզի առողջապահական հիմնարկներին և համայնքի ղեկավարներին տրվել է հանձնարարականներ՝ ամռան ժամանակաշրջանի հետ կապված նախադպրոցական կազմակերպություններում հիվանդությունների առաջացումն և տարածումը կանխելու նպատակով:

21.06.2016թ. դրությամբ մարզպետարանի ենթակայության առողջապահական հիմնարկներից ոչ մեկը աշխատավարձի պարտքեր չունեն, կրեդիտորական պարտքերը կազմում են՝ <<Զարիշատ /Արամ/ Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ>> ՓԲԸ-ն՝ 28.506,3հազ. ՀՀ դրամ; <<Վաղարշապատի ծննդատուն>> ՊՓԲԸ-ն՝ 37.215,5հազ. ՀՀ դրամ; <<Մեծամորի ԲԿ>> ՓԲԸ-ն՝ 37.918,5հազ. ՀՀ դրամ; <<Քևորք և Անիթա Փակումեանների

հիշատակի Հիսուսի մանուկներ ԱԿ>> ՓԲԸ-ն՝ 2.687,2հազ. ՀՀ դրամ; <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՊՓԲԸ-ն՝ 20.190,8 հազ. ՀՀ դրամ:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը 150,000.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի վարկային ծրագրերի միջոցներով 150,000.0հազ. դրամ, մասնավորապես՝

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ծրագրեր չեն իրականացվել:

Աղյուսակ 4. Առողջապահության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝ Բարելավել բուժսպասարկման մատչելիությունը և որակը մարզում			
1. Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավում, ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը, մայրական և մանկական հիվանդացության և մահացության նվազեցմանը, ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը			
1.1. Բժշկական անձնակազմի վերապատրաստում՝ ներառելով ընտանեկան բժիշկներին	Վերապատրաստված բժիշկների և բուժքույրերի ընդգրկվածության արդյունքային ցուցանիշը	98%	69.5%
1.2. Վերարտադրողական առողջության բարելավում, մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	Մինչև 1 տարեկան երեխաների մահացության թվի իջեցում՝ 1000 կենդանածինների հաշվով, Մինչև 5 տարեկան երեխաների մահացության թվի իջեցում՝ 1000 կենդանածինների հաշվով, Մայրական մահացության թվի իջեցում՝ ընդհուպ մինչև մահվան դեպքերի չարձանագրում	6.8 պրոմիլե 0.3 պրոմիլե -	2.6 պրոմիլե 0.1 պրոմիլե -
1.3.Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Հղիների վաղաժամ ընդգրկում, մայրական դպրոցի կատարելագործում	92%	97%
1.4. Ակտիվ տուբերկուլյոզով բնակչության հիվանդացության իջեցում	Հիվանդացության դեպքերի թվի իջեցում	9-10%	7%
1.5. Կանխարգելիչ պատվաստումներում երեխաների ընդգրկվածություն	Կանխարգելիչ պատվաստումներում երեխաների ընդգրկվածության բարձրացում	97-99%	98-99%
2. Գյուղական բնակավայրերում առողջության պահպանման առաջնային ծառայությունների մատչելության բարձրացում, որի արդյունքում մարզի գյուղական բնակչությունը հնարավորություն կունենա տեղում օգտվելու առաջնային բուժօգնության ծառայություններից			
2.1 Գյուղական համայնքներում նեղ մասնագետների կանոնավոր այցելություններ	Գյուղական համայնքների բնակչության ընդգրկվածություն	90-92%	98%
3. Բուժսպասարկման հաստատությունների շենքերի, շինությունների նյութատեխնիկական բազայի բարելավում, ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը			
3.1 Բժշկական հաստատու-թյունների (հատկապես գյուղական) շենքային պայմանների բարելավում	Չվերանորոգված բուժհիմնարկների ընդգրկվածության բարձրացում	95-98%	95%
3.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Բուժ.հիմնարկներում (պոլիկլինիկական-ամբուլատոր, հիվանդանոցային) ախտորոշիչ սարքավորումների թվի ավելացում	80-85%	87%
3.3 Հիվանդանոցների ապահովում ժամանակակից սարքավորումներով	Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռի բարձրացում	80-85%	55%
	Ստացիոնար բուժօգնություն ստացածների ընդհանուր թվում Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար	10%	7%

	կշռի իջեցում		
4. Բուժհաստատությունների կառավարման բարելավում, կառավարման արդյունավետության բարձրացում			
4.1. Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում կառավարման ժամանակակից մեթոդներով	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշռի բարձրացում Բուժհաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայու-թյուններից գոյացող միջոցների նպատակային օգտագործում	85-90%	60%
4.2. Առողջապահական հաստատությունների բարեփոխումների՝ հատկապես շտապ բժշկական օգնության ծառայության գծով, ծրագրերի շարունակական իրականացում	Որակյալ մասնագիտական անհետաձգելի օգնություն	90-95%	78%
5. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ պայքարի միջոցառումների ուժեղացում, ինչը կնպաստի հիվանդությունների թվի իջեցմանը			
5.1. Դպրոցների ուսումնական ծրագրերում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ դասաժամերի հատկա-ցում և աշակերտների կրթում	Դասընթացների ներգրավված դպրոցականների ընդգրկվածության բարձրացում	90-95%	92%
5.2. ԶԼՄ-ների միջոցով տարփոխիկ հիվանդությունների՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի, մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշռի բարձրացում	90-95%	95%

4.4.3. Խնդիրները

Բժշկական արդյունավետության բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը դա արտահիվանդանոցային բուժօգնության բարելավումն է: Խնդիր է ընտանեկան բժշկության ինստիտուտի ներդրումը մարզի քաղաքային պոլիկլինիկաներում:Դեռևս դժվար է ապահովել նեղ մասնագիտական և դիսպանսերային բուժօգնության մեջ գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող բնակչության համար հավասար ընդգրկվածության ցուցանիշ:

Չնայած անվճար և արտոնյալ պայմաններում դեղորայքով ապահովման խնդիրը լուծված է, սակայն գործընթացի թիրախային ցուցանիշն ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել անվճար տրամադրվող դեղորայքի ցանկը:

Հիվանդանոցային բուժօգնության որակի բարելավման առումով անհրաժեշտ է նվազեցնել պերինատալ մահացության և հիվանդանոցային մահաբերության ցուցանիշները, համաչափ զարգացնել պլանային և անհետաձգելի վիրաբուժությունը:

Բնակչության մեկ շնչին ընկնող հաճախումների թվի ավելացում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ:

Մարզում կարևորագույն խնդիրներից և ռազմավարական նպատակներից է բժշկական հաստատությունների՝ «Վաղարշապատի ծննդատուն», «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ-ների, «Մեծամորի բժշկական կենտրոն» և «Արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ների շենքային պայմանների բարելավումը և արդի բժշկական սարքավորումներով ապահովումը:

4.4.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Գյուղական ազգաբնակչության նեղ մասնագիտական բուժօգնության մատչելիության ապահովման համար անհրաժեշտ է մշակել ֆինանսավորման և մոնիտորինգի նոր մոդելներ՝ այն

է ֆինանսավորումը պետք է իրականացվի նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բուժհաստատության, իսկ մոնիտորինգը՝ ԱԱՊ տարածքային կենտրոնի միջոցով: Անհրաժեշտ է գյուղական ԱԱՊԿ-ի ֆինանսավորման ծավալները հաշվարկել անհատական՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Անվճար և արտոնյալ պայմաններում տրամադրվող դեղերի ցանկը ընդլայնելու համար անհրաժեշտ է իրականացնել համագործակցություն այն համայնքների հետ, որոնք բժշկական ծրագրեր իրականացնելու համար նախատեսել են ֆինանսական միջոցներ, ինչը կնպաստի այդ միջոցների նպատակային օգտագործմանը:

Պերինատալ մահացության ցուցանիշի նվազեցման համար անհրաժեշտ է բարձրացնել հղիների վաղ ընդգրկումը նախածննդյան հսկողության մեջ, ինչպես նաև հագեցնել ծննդատները նորագույն սարքավորումներով:

4.5. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.5.1. Քաղաքականության վերլուծություն

2016թ. սոցիալական ապահովության բնագավառում մարզի զարգացման առաջնային նպատակներից շարունակում է մնալ սոցիալական ծառայությունների մատչելիությունը բոլոր խոցելի խմբերի համար, ինչպես նաև սպասարկման որակի բարձրացումը: Սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը իրագործվում է սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացմամբ և սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության միջոցառումների ընդլայնմամբ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ մատուցող պետական և ոչ պետական կառույցների համագործակցության, սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստման, սոցիալական ծառայության գործակալությունների նյութատեխնիկական բազայի բարելավման և սոցիալական ծառայությունների համակարգի կառավարման բարելավման միջոցով՝ մասնավորապես ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրմամբ:

2016թ. ուշադրության կենտրոնում են հետևյալ միջոցառումների իրականացման աշխատանքները՝ հաշմանդամներին (հատկապես հաշմանդամ երեխաներին) վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովումը, ինչպես նաև նրանց հասարակության մեջ ինտեգրելու ծրագրերի իրականացումը, ծերերի համար ցերեկային խնամքի կենտրոնների և տնային պայմաններում խնամքի ծառայության գործարկումը և կատարելագործումը, փախստականներին հասարակությանը ինտեգրվելու ծրագրերի իրագործումը, գործազուրկների մասնագիտական վերապատրաստումները և նրանց առնվազն ժամանակավոր զբաղվածության ապահովումը՝ սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությունների աջակցության ծրագրերի իրականացում, սոցիալական և այլ իրավունքների վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զարգացումը:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում (մարզի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, հաշմանդամ, անապահով, սոցիալական և բարոյահոգեբանական դժվարություններ կրող ընտանիքների երեխաների նկատմամբ) նախատեսվում է իրականացնել հետևյալ բարեփոխումները՝

- երեխաների իրավունքների պաշտպանություն իրականացնող բոլոր պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցության ապահովում
- ներառական կրթության կազմակերպում անհրաժեշտ չափորոշիչներին համապատասխան

- երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում որակյալ մասնագիտական խմբերի ստեղծում (սոցիալական աշխատող, հոգեբան, լոգոպետ-մանկավարժ և այլն)
- գենդերային պետական քաղաքականության ապահովում մարզում:

4.5.2 Իրականացման առաջընթացը

2016 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կազմակերպվել և իրականացվել են մարզի երեք ՍԾՏԳ-ներում ընտանիքների անապահովության գնահատման համակարգով հաշվառված ընտանիքների փաստագրման աշխատանքները: 2016թ. հունիսի 1-ի դրությամբ փաստագրված ընտանիքների թիվը 7154 է, որոնցից նպաստառու են 4744-ը:

Մարզում բնակվում են 39,547 կենսաթոշակառուներ, 11,974-ը՝ հաշմանդամներ, 396-ը՝ զոհված ազատամարտիկների և 41 անհայտ կորած անձանց ընտանիքներ, 1062-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն:

Աղյուսակ1. Մարզում խոցելի խմբերի թվաքանակի տվյալները 2015թ. և 2016թ. 1-ին կիսամյակի կտրվածքով

Բովանդակություն	Արմավիր	Վաղարշապատ	Բաղրամյան	Ընդամենը մարզում
Փաստագրված ընտանիքների թիվը /2015թ.հունիս/	2875	3745	835	**7455**
Փաստագրված ընտանիքների թիվը /2016թ.հունիս/	2674	3627	853	**7154**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2015թ.հունիս/	1847	2332	583	**4762**
Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ.հունիս/	1793	2357	594	**4744**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2015թ.հունիս/	425	573	89	**1087**
Սոցիալական նպաստ ստացող ընտանիքների թիվը /2016թ.հունիս/	454	569	95	**1118**
Գրանցված գործազուրկների թիվը /2015թ.հունիս/	1990	1156	1232	**4378**
Գրանցված գործազուրկների թիվը /2016թ.հունիս/	2425	1459	1433	**5317**
Ավանդի փոխհատուցման ումար ստացած ընտանիքների թիվը /2015թ.հունիս/	60	58	7	**125**
Ավանդի փոխհատուցման գումար ստացած ընտանիքների թիվը /2016թ.հունիս/	45	59	1	**105**

Հաշվետու ժամանակաշրջանում նպաստների և ավանդի փոխհատուցման գումարի վճարման համար ֆինանսավորումը կազմել է 918,946.9 հազ. դրամ, որից փաստացի վճարվել է 836,714.8 հազ.դրամ:

ՀՀ Արմավիրի «Մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերի այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում դրամական օգնություն է հատկացվել 237 ընտանիքների՝ 10665.0 հազ. դրամ գումարի չափով:

2016թ. հունիսի 1-ի դրությամբ մարզի զբաղվածության տարածքային գործակալություններում հաշվառված են աշխատանք փնտրող 6832 մարդ, որոնցից գործազուրկի կարգավիճակ են ստացել 5317-ը: Գործակալություններում հաշվառված աշխատանք փնտրող անձանցից աշխատանքի են տեղավորվել 152 մարդ:

<<«Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 17 ապրիլի 2004 թվականի N 534-Ն որոշման 21 հավելվածի համաձայն ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ և Արևաշատ համայնքներում իրականացվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման>> 2 ծրագիր. Արգավանդ համայնքում՝ 852.0 հազ. դրամ արժողության, Արևաշատ համայնքում՝ 1464,7 դրամ արժողության:

Վերոնշյալ որոշման 19 հավելվածի համաձայն «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման» ծրագիրը 2016 թվականին իրականացնելու նպատակով ՀՀ Արմավիրի մարզին հատկացված ֆինանսական միջոցների չափը կազմում է 178500,0 հազ. ՀՀ դրամ :

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Արմավիրի գյուղական համայնքներում իրականացվել է 593 ծրագիր՝ 150.180.0 հազ. դրամ արժողությամբ:

Արմավիրի մարզային սոցիալական ապահովագրության տարածքային կենտրոններում հաշվառված են 39547 կենսաթոշակառուներ, այդ թվում ըստ տարածքների՝

Արմավիրի ՏԿ - 17392 մարդ
Վաղարշապատի ՏԿ - 19781 մարդ
Բաղրամյանի ՏԿ - 2374 մարդ:

ՀՀ վարչապետի <<Դպրոցականների 2016թ. ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> 30.05.2016թ. N 444-Ա որոշման համաձայն կազմակերպվել է մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան թվով 88 երեխաների ամառային հանգստի /20-օրյա/ կազմակերպումը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում: 1-ին հերթափոխը մեկնարկել է հունիսի 20-ին:

Առողջարանային և վերականգնողական բուժման ուղեգրեր են տրամադրվել 97 հաշմանդամների, այդ թվում Ջերմուկ՝ 22, Գանձաղբյուր՝ 53, Վանաձոր՝ 17, Արարատ՝ 10:

Կազմակերպվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» 2 նիստեր, որտեղ քննարկվել են հաշմանդամներին հասարակությանն ինտեգրելու, ինչպես նաև մարզում ներառական կրթության խնդիրները:

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշմամբ հաստատված <<Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու>> կարգի համաձայն Արմավիրի մարզպետարանում հաշվառված է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող Արցախյան պատերազմում զոհված՝ 51 և հաշմանդամ դարձած՝ 128 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետարանում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող արցախյան պատերազմում զոհված՝ 1 և հաշմանդամ դարձած՝ 1 զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիք:

2016թ. 1-ին կիսամյակի ընթացքում անհատույց պետական ֆինանսական աջակցություն է ստացել զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողի /ազատամարտիկի/ 1 ընտանիք:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ. Մարզի 12 համայնքներում իրականացվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կատարած աշխատանքների մոնիթորինգ: Մարզի հանրակրթական և հատուկ/օժանդակ/ դպրոցներից պարբերաբար ստացել ենք տեղեկություններ պարտադիր ուսուցումից դուրս մնացած աշակերտների մասին, ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները նրանց դպրոցներ ինտեգրելու համար: Կատարել ենք այցելություններ մարզի տարբեր հանրակրթական և հատուկ/օժանդակ/ դպրոցներ՝ ուշադրություն հրավիրելով հատկապես հատուկ /օժանդակ/ դպրոցների վրա:

ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունից ստացել ենք վարչության ենթակա ՆԳ բաժիների ԱԳԲ-ում հաշվառման մեջ գտնվող և փաստացիորեն հայտնի մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող, ինչպես նաև ՀՀ ԱՆ ՔԿՎ այլընտրանքային պատիժների կատարման բաժնի Արմավիրի բաժանմունքից 4 անչափահաս երեխաների վերաբերյալ տեղեկատվություն՝ նրանց շրջանում համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով: ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության կողմից հաշվառման են վերցվել 13 անչափահասներ: Իրականացված աշխատանքների արդյունքում 22 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 6 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 1 անչափահաս տեղավորվել է հանրապետական թիվ 1 կրթահամալիր:

Կատարել ենք տուն-այցեր ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության ենթակա բաժինների ԱԳԲ-ներում հաշվառման վերցված անչափահասների ընտանիքներ՝ նրանց կյանքի պայմանների, դրսևորած վարքագծի, ինչպես նաև ընտանիքների ուսումնասիրման նպատակով: Բաժին է ներկայացվել սկզբնական հաշվառման վերցված առանց ծնողական խնամքի մնացած թվով 1 երեխայի անձնական գործը, ով վերցվել է տարածքային հաշվառման: Վկայագրվել է թվով 209 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ՀՀ 3 քաղաքացիներ վերցվել են հաշվառման, որպես որդեգրել ցանկացող անձինք և 1 երեխա վերցվել է հաշվառման որպես որդեգրման ենթակա երեխա: Մասնագիտացված մանկատուն է տեղավորվել 1 երեխա:

Աղյուսակ 5. Սոցիալական պաշտպանության և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտներում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Արմավիրի մարզում	1.Նպաստառու ընտանիքների տեսակարար կշիռը մարզի ընտանիքների թվում, %	6.5%	6.5%
	2. Հրատապ դրամական օգնություն ստացած ընտանիքների տեսակարար կշիռը մարզի ընտանիքների թվում, %	2.5%	2.0%
	3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում, %	10%	3.3%
	4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի թիվը	300	190
1. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար աշխատանքի նպատակայնության բարձրացմանը			

Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը	20	7
2. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում			
Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական և ոչ պետական) կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը (մարզպետարան և ՍԾՏԳ-ներ, ՏԻՄ-եր)	22	8
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը			
3.1. ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	40	27
3.2. Պետական մարմինների և ՍԾՏԳ-ների համագործակցության արդյունքում սպասարկման համակարգի բարելավում	Պետական մարմինների կողմից տեղեկատվական բազաների համադրման արդյունքում ՍԾՏԳ-ներին տրամադրված ճշգրտման ենթակա ցուցակների թիվը	20	18
4. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով			
Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	**1.**Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչներով ապահովվածության մակարդակը, **2.** Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը	20% 3	20% 3
5. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների բազմազանությանը			
5.1.Ծերերի խնամքի ծառայությունների (տան պայմաններում խնամք, ցերեկային կենտրոն) կազմակերպում և զարգացում	Բացի պետական տրանսֆերտներից խնամքի ծառայություններից օգտվող ծերերի թիվը	180	92
5.2.Հաշմանդամներին վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում	Վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներ ստացած հաշմանադամներ	80	34
5.3. Գործազուրկների համար մասնագիտական ուսուցման կազմակերպում	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածները	14	9
6. Բնակարանային հիմնահարցերի լուծում			
6.1. Զոհված(մահացած) կամ հաշմանդամ (վիրավոր) դարձած ազատամարտիկների բնակարանային ապահովության	Ֆինանսավորում անօթևան և կարիքավոր ընտանիքներին	51	3

հիմնահարցեր			
6.2 Փախստական ընտանիքների բնակարանային ապահովության հիմնահարցեր	Ժամանակավոր կացարաններում, հանրակացարաններում բնակվող ընտանիքների բնակապահովության ծրագրեր	70	0
7.Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին, կանանց և երեխաներին սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայությունների իրականացում			
1.1 Դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տվյալների տեղեկատվա-կան բազայի շարունակական մուտքագրում և վերահսկում	Մարզում դժվարին իրավիճակում հայտնված երեխաների թիվը	130	106
1.2 Ժամանակավոր խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային և վերականգնողական կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ-հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվը	70	110

Կատարված աշխատանքների վերլուծությունը փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածում պետական և հասարակական կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքի արդյունքում զգալի թվով մարդիկ օգտվել են տարբեր սոցիալական ծրագրերից, սոցիալական ոլորտում առկա է որոշակի դրական տեղաշարժ, սակայն անհրաժեշտ է, որպեսզի հիմնախնդիրների լուծումը և միջոցառումների իրագործումը կրեն շարունակական կատարելագործման բնույթ:

Մարզի համար սոցիալական պաշտպանության բնագավառում կարևորվում է սոցիալապես խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ծառայությունների, ինչպես նաև միայնակ տարեցների և հաշմանդամների տնային սպասարկման համակարգի ընդլայնումը:

Գործազրկության բարձր մակարդակը պայմանավորված է նաև քաղաքային համայնքներում նախկինում գործող արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների չգործելու հանգամանքով, ինչպես նաև մարզի տարածքում ներկայումս գործող վերամշակող ձեռնարկությունների արտադրության փոքր ծավալներով:

Մարզում դեռևս հիմնախնդիր է մնում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների համար նախատեսված ցերեկային խնամքի կենտրոնների չգործելը, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող բոլոր պետական և ոչ պետական կառույցների սերտ համագործակցությունը, համայնքներում սոցիալական աշխատողների բացակայությունը:

4.5.4 Քաղած դասերը և հետագա քայլերը

Մասնագիտական կրթությունը և ուսուցումը ոչ միշտ են զբաղվածության երաշխիք հանդիսանում: Զբաղվածության քաղաքականության այլ միջոցառումներին զուգահեռ, անհրաժեշտ է ուսուցումը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին: Մասնագիտական կրթությունը և ուսուցումը պետք է ներդաշնակեցվի տնտեսության նոր պահանջներին համապատասխանեցնելու միջոցառումների ընդհանուր շրջանակների հետ: Դեռևս հստակ դիրքորոշում չի ձևավորվել առ այն, թե ուսուցման ինչպիսի կարիքներ պետք է բավարարեն կամ ինչպիսի հմտություններ պետք է ձեռք բերվեն, որպեսզի պատշաճ կերպով հասցեագրվեն տնտեսության կարիքները և առավելագույնի հասցվեն մասնագիտական հաստատությունների շրջանավարտների և գործազուրկների հնարավորությունները աշխատանք գտնելու ուղղությամբ: Հողերի զանգվածային վերաբաշխման արդյունքում ի հայտ եկան հողի շատ սեփականատերեր, ովքեր իրենց ապրուստը չեն վաստակում հողը մշակելուց, սակայն չեն

կարող ստանալ գործազրկության նպաստ: Ինչպես նշում են զբաղվածության ոլորտի աշխատակիցները, գործակալությունների ամենօրյա աշխատանքի 80%-ն անմիջականորեն կապված է թղթային աշխատանքի և նպաստների վճարման հետ և միայն 20 %-ն է հատկացվում ծրագրերի իրականացմանը: Զարգացած երկրներում հակառակ իրավիճակն է:

Հետագայում նույնպես հետևողական աշխատանքներ պետք է տարվեն սոցիալական ծառայությունների մատչելիության և որակի բարձրացման ուղղությամբ: Ինտեգրված սոցիալական ծառայությունների ստեղծումը կոչված է ապահովելու այդ խնդիրը:

Վերականգնել նախկինում համայնքներում ստեղծված ցերեկային կենտրոնների աշխատանքները և ներդնել սոցիալական աշխատողի ինստիտուտը:

5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

5.1. Քաղաքականության վերլուծություն

Արմավիրի մարզի բնակչության զբաղվածության մեծ մասը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը, որի զարգացման գլխավոր նպատակն է բուսաբուծության՝ խաղողագործության, բանջարաբուծության, պտղաբուծության ճյուղերի և անասնապահության հետևողական ինտենսիվացման շնորհիվ գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացումը, որը կբերի գյուղացիական տնտեսությունների եկամուտների աճին և աղքատության կրճատմանը:

ՄԶԾ-ում արտացոլված ոլորտի գերակայություններն են՝ մարզի հողային և մարդկային ռեսուրսների հետևողական և արդյունավետ օգտագործումը, բուսաբուծական մթերքների, բոստան-բանջարանոցային և կերային մշակաբույսերի արտադրության ծավալների և նրանց ապրանքայնության մակարդակի հնարավորինս ավելացումը, ոռոգման համակարգի բարելավումը, անասնաբուծական ծառայությունների բարելավման միջոցով գյուղատնտեսական կենդանիների մթերատվության, անասնապահական մթերքների որակի, արտադրության արդյունավետության և ապրանքայնության մակարդակի բարձրացումը, հակակարկտային կայանքների թվի ավելացումը, գյուղատնտեսական վարկերի հասանելիության ապահովումը աղքատ գյուղացիական տնտեսություններին և գյուղատնտեսական ձեռնարկություններին, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվելու ռիսկը մեղմելու նպատակով մարզում գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդնումը և զարգացումը, մարզում գյուղատնտեսական մթերքների վերամշակվող ձեռնարկությունների թվի ավելացումը, մարզում հողերի կատեգորիաների ուսումնասիրման, ճշգրտման և վերահսկողության իրականացումը, գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակի և տեխնիկայի օգտագործման արդյունավերտության բարձրացումը, հողերի խոշորացման և գյուղացիական տնտեսությունների միավորման շահագրգռումը, գյուղատնտեսության ոլորտում իրականացվող միջոցառումների մասին բնակչության իրազեկումը:

6.2. Իրականացման առաջընթացը

2016 թվականի առաջին կիսամյակում կազմակերպվել և համակարգվել են համայնքներում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները: 01.01.2016թ. դրությամբ մարզում հաշվառվել են 60382 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, մանր եղջերավոր՝ 102065, խոզեր՝ 25444, 900959 թռչուններ: Հաշվետու ժամանակահատվածում համակարգվել է մարզում գործող <<Ոռոգում - Ջրառ>> ՓԲԸ-ի երկու մասնաճյուղերի և 7 ՋՕԸ-ի գործունեությունը: 252.97 կմ միջտնտեսային, 4981.1 ներտնտեսային ցանցերը, 364 խորքային հորերը և 70 պոմպակայանները պատրաստ են եղել ջրամատակարարմանը, որը սկսվել է ս/թ ապրիլի 1-ից:

Աշխատանքային ծրագրին համապատասխան և մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովը ուսումնասիրել և գույքագրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Մեծամոր և

Քասախ գետերի, ինչպես նաև հեղեղատարների հուների մաքրման և ափապատնեշների ամրացման նպատակով իրականացվելիք աշխատանքները և ներկայացվել է ՀՀ կառավարություն:

2016թ. ընթացքում նախատեսվել է մարզում մաքրել 34,87կմ երկարությամբ բաց դրենաժային համակարգ 8 համայնքներում: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է մարզի համայնքներում մաքրել բաց դրենաժային ցանց՝ Երասխահուն 8654մ, Ջրառատ 4400մ, Արտաշար 3550մ, Արտիմետ 2000մ, Արազափ 2330մ, Մարգարա 8585մ, Վարդանաշեն 2350մ, Զարթոնք 3000մ: Նշված համայնքներում աշխատանքները կսկսվեն ս/թ սեպտեմբեր ամսից:
Աշխատանքային ծրագրին համապատասխան վարչության կողմից ուսումնասիրվել և համակարգվել է համայնքներում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման, գարնանացանի իրականացման աշխատանքներ: Գարնանացանի նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների վերաբերյալ հարցերը ներկայացվել են մարզխորհրդի նիստերի քննարկմանը:

ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով մարզի հողօգտագործողներին որպես աջակցություն տրամադրվել են 80.0տոննա գարնանացան գարու, 2.54տոննա առվույտի սերմացուներ,որը համապատասխանաբար բաշխվել է 35, 12 համայնքների 240 շահառուների, որոնք 501,55 հա-ի վրա կատարել ցանքսի աշխատանքներ:
6000տոննա ազոտական պարարտանյութ, որից ներկրվել է 5099տոննան, 200տոննա ֆոսֆորական պարարտանյութ որից ներկրվել է 160տոննան, 200տոննա կալիումական պարարտանյութ,որից ներկրվել է 130տոննան:
550000 լիտր դիզելային վառելանյութ, որից վճարվել և ներկրվել է 370000լիտր:

2016թվականի մայիսի 12-ին, 18-ին, 23-ին, հունիսի 4-ին և 5-ին տեղի ունեցած կարկտահարության հետևանքով վնասվեցին մարզի թվով 26 համայնքներին պատկանող 5254,6հա պտղի, խաղողի, բանջարեղենի և բոստանի տարածությունները: Համայնքային հանձնաժողովների կողմից գույքագրվել է կարկուտի հասցրած վնասները, որը ամփոփվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն:
Կարկտահարության հասցրած վնասները մեղմելու նպատակով մարզում տեղակայվելու է 12 հակակարկտային կայաններ՝ Տանձուտ –4, Արևիկ –1, Եղեգնուտ –3 , Արտաշար –2 և Արգինա -2 հատ:

Հողաշինության և հողօգտագործման բնագավառ. Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների հաստատման նպատակով սահմանված կարգով ՀՀ կառավարություն են ներկայացվել մարզի Նորակերտ, Արևադաշտ, Տարոնիկ և Մրգաստան համայնքներում հողերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ հողաշինական գործերը: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին՝ առաջարկելով համաձայն ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1918 – Ն որոշման ընդունել ավագանու համապատասխան որոշումներ և կատարել պետական գրանցումներ:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի <<Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> N186-Ն հրամանի դրույթների՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ, Մյասնիկյան, Առատաշեն, Լենուղի գյուղական համայնքների կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման առաջարկությունները: Ստացված համապատասխան եզրակացությունները ներկայացվել են համայնքների ղեկավարներին:

Բաժին-տեսչությունը ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան կարգադրություններով ստեղծված հանձնաժողովի կազմում ընդգրկվելով մասնակցություն է ցուցաբերել մարզի Ակնալիճ, Արտաշար, Քարակերտ, Զարթոնք, Եղեգնուտ, Տարոնիկ և Լեռնագոգ, Այգեշատ (Արմ.),

Նորակերտ, Հայկաշեն, Արևաշատ, Նոր Կեսարիա, Փշատավան, Երվանդաշատ և Ոսկեհատ, համայնքներում իրականացվող վարչական հսկողությանը:

Վերահսկողություն է իրականացվել մարզի համայնքներում հողամասերի նպատակային նշանակության փոփոխություն կատարելու հետևանքով կատարված աշխատանքների նկատմամբ, հավաքագրվել և ՀՀ տարածքային կառավարման նախարարություն են ներկայացվել տվյալներ:

Իրականացվել է համայնքների վարչական սահմաններում գտնվող հողամասերի աճուրդային վաճառքի և վարձակալության տրամադրման վերաբերյալ տվյալների հավաքագրում, ամփոփում և տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման նախարարություն:

ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և ՀՀ Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կազմում կազմակերպված ուսումնասիրությունների արդյունքում մարզի Նորապատ, Մյասնիկյան, Դալարիկ, Հացիկ, Հայկավան, Բամբակաշատ, Նորավան, Այգեկ, Տալվորիկ, Տանձուտ համայնքների համար տրվել է եզրակացություն՝ բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու վերաբերյալ /ընդամենը՝ 69 հա/:

2016թ. ապրիլի 25-ից մինչև մայիսի 4-ը ներառյալ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին, մարզային հողային պետական տեսչության և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից իրականացվել են տեսչական ստուգումներ մարզի մի շարք համայնքներում /Արաքս/Էջմ./, Ապագա, Մարգարա, գ.Մեծամոր, Խորոնք, Հուշակերտ, Ծաղկալանջ, Բաղրամյան/Բաղ./, Գետաշեն, Ծիածան, Արագած, Բաղրամյան/Էջմ./, Կողբավան և ք.Արմավիր: Ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերաբերյալ կատարվում են քննարկումներ:

ՄԶԾ-ով 2016թ. գյուղատնտեսության ոլորտի կարիքների գնահատումը կազմել է շուրջ 14,847,959.0հազ.դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսված իրական ներդրումների չափը կազմում է 1,444,159.0հազ.դրամ

Համայնքային բյուջեի միջոցներով նախատեսվում է իրականացնել շուրջ 48,350.0հազ.դրամի ծրագրեր:

ՄԶԾ-ում այլ աղբյուրներով ընդգրկված միջոցառումների իրականացման խնդիրը (130,000.0հազ. դրամ) բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ ոլորտում փաստացի կատարվել են շուրջ 19,239.8հազ.դրամի ծրագրեր համայնքային բյուջեի և մասնավոր ներդրողների միջոցներով:

Աղյուսակ 6. Գյուղատնտեսության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ավելացնել գյուղատնտեսության համախառն արտադրությունը	1.Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում, %	100000 մլն.դրամ	
Արդյունք 1. Մարզի հողային և մարդկային ռեսուրսների արդյունավետ	1.1.Օգտագործվող վարելահողերի մակերեսը	26835.8հա	29224հա
	1.2.Չօգտագործվող վարելահողերի	14740.0հա	

օգտագործում	տարածքը		
	1.3.Մշակաբույսերի ցանքատարածությունների մակերեսը	41575.8հա	
	1.4 Գյուղատնտեսության ոլորտում զբաղված աշխատուժի տեսակարար կշիռը	60%	
Արդյունք 2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն արտադրանքի ծավալների բարձրացում	2.1.Բանջար-բոստանային մշակաբույսերի բերքատվությունը -բանջար -բոստան	 334.6 g/հա 284.5 g/հա	
	2.2.Խաղողի բերքատվությունը,	183.5 g/հա	
	2.3.Պտղի բերքատվությունը,	107.5 g/հա	
	2.4. Հացահատիկի բերքատվությունը	33.2 g/հա	
	2.5. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները	41963.5 հա	
Արդյունք 3. Ոռոգման համակարգի բարելավում	3.1. Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը, հա Թիրախ՝ ոռոգելի հողերը մարզում ընդարձակել 1500հա-ով	301.7 հա	
	3.2. Համայնքներում վերանորոգված ջրանցքների թիվը	32	
	3.3. Վերականգնված ոռոգման ցանցերի ընդհանուր երկարությունը	65.8 կմ	
	3.4. ՋՕԸ-ների ոռոգման աշխատանքների կազմակերպման համար պետ. բյուջեից հատկացումների չափը	մլն.դրամ	
Արդյունք 4. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, որակի բարելավում և հիվանդությունների կանխում	4.1. Կաթի արտադրության ծավալները	41.1 հազ.տոննա	
	4.2. Մսի արտադրության ծավալը	7.7 հազ. տոննա	
	4.3. Կաթի իրացման ծավալները	հազ. տոննա	
	4.4. Մսի իրացման ծավալները	հազ. տոննա	
	4.5. Բրդի իրացման ծավալները	121 հազ. տոննա	
	4.6. Ձվի իրացման ծավալները	50 մլն. հատ	
	4.7. Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխաքանակը	հազ. գլուխ	
Արդյունք 5. Գյուղատնտեսական արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1. Մարզում գյուղատնտեսական արտադրանքի շուկաների թիվը	5	5
	5.2. Մարզում առևտրային կազմակերպությունների թիվը	13	13
	5.3. Մարզում գյուղացիական տնտեսությունների թիվը	52323	52323
	5.4. Սառնարանային տնտեսությունների թիվը	207	207
	5.5. Սպանդանոցների թիվը	-	
Արդյունք 6. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում	6.1. Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների	9606 6.8 մլրդ.դրամ	

	(ձեռնարկությունների) թիվը -ընդհանուր գումարը		

5.3. Խնդիրները

Գյուղատնտեսության ոլորտում հիմնախնդիրներն են.

1) Գյուղատնտեսությունում ռիսկերի նվազեցումը
2. Գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության սակավությունը և մաշվածությունը, սպասարկման բարձր գները
2) Գյուղ.մթերքների իրացումը
3) Հողերի մելիորատիվ վիճակը
4) Գյուղատնտեսական վարկերի ցածր մասնաբաժիններն ու բարձր տոկոսադրույքները
5) Հակահեղեղային իրավիճակը:

5.4.Քաղած դասերը և հետագա քայլերը

2016թ. պետք է հետևողականորեն շարունակվեն վերոնշյալ խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ֆերմերային և գյուղացիական տնտեսությունների բանջար-բոստանային կուլտուրաների, խաղողի, պտղի արտադրության ծավալների ավելացման գործընթացը, հետևողականորեն շարունակվեն հակակարկտային կայանների տեղադրման աշխատանքները և հասնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրմանը:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

6.1. Քաղաքականության վերլուծություն

Մարզի բնապահպանական հիմնախնդիրները կապված են աղակալված և դեգրադացված հողերի դեմ պայքարի միջոցառումների, հողերի էռոզիայի դեմ պայքարի, կենսաբազմազանության պահպանման, օգտակար հանածոների և ջրային պաշարների պահպանման, արդյունավետ օգտագործման, տարբեր տեսակի թափոնների և կենցաղային աղբի հավաքման, տեղափոխման, տեղադրման, վնասազերծման և վերամշակման և բնակչությանը խմելու մաքուր ջրով ապահովելու պլանի արդյունավետ իրականացման հետ, որը կարող է երաշխավորել մարզում բնապահպանական իրավիճակի բարելավման կայուն հիմքերը:

Մարզի բնապահպանական իրավիճակը բարելավելու, շրջակա միջավայրի և բնական պաշարների խնայման, արդյունավետ օգտագործման և կառավարման խնդիրները լուծելու համար պլանավորվել են ծրագրերն իրականացնել հետևյալ բնագավառներում.

- Հողային պաշարների արդյունավետ կառավարում
- Հողերի դեգրադացիոն երևույթների կանխում, մելիորացիայի կազմակերպում, մշակության առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում, բերրիության բարձրացում
- Ջրային պաշարների արդյունավետ կառավարում
- Կենցաղային աղբի հեռացման և վերամշակման կազմակերպում, վտանգավոր թափոնների վնասազեծման կառավարում
- Արհեստական անտառածածկ տարածքների ստեղծում, կանաչապատ տարածքների ընդարձակում և արդյունավետ կառավարում
- Ջրածածկ տարածքների արդյունավետ կառավարում
- Կենսաբազմազանության պահպանման կառավարում:

6.2. Իրականացման առաջընթացը

ՀՀ Արմավիրի մարզում բնապահպանության ուղղությամբ 2015 թվականի առաջին կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Կանաչապատման նպատակով մարզի մի շարք համայնքներում <<Էյ ԹԻ Փի>> բարեգործական հիմնադրամի համագործակցության արդյունքում մարզում տնկվել է ավելի քան 45000 ծառերի ու թփերի տնկիներ ու արմատակալներ, բարելավվել կանաչապատ տարածքների խնամքը: Արգելվել է Ջրառատ և Լուսագյուղ համայնքներում ընդերքի անօրինական շահագործումը և հողերի ոչ նպատակային օգտագործումը: Մարզի Արևիկ, Արմավիր, Նալբանդյան և Ջանֆիդա համայնքներում արգելվել են անօրինական աղբավայրերը և համայնքի միջոցներով վերացվել է կուտակված աղբը, բարելավվել աղբահանության, աղբատեղափոխման և կուտակման աշխատանքները 4 համայնքներում՝ Ծաղկունք, Արշալույս, Նորավան և Արաքս /Արմ/: Հանրապետական համապատասխան ծառայությունների հետ համատեղ ուսումնասիրվել է մարզի կենսառեսուրսների պահպանության վիճակը՝ 2 համայնքներում:

ՄԱԿ-ի անապատացման դեմ կոնվենցիայի քարտուղարության կողմից իրականացվող <<Դեպի հողերի չեզոք դեգրադացիայի հասնելը, գաղափարը գործնականում կիրառելի դարձնել Հայաստանում>> ծրագրի շրջանակներում նախատեսվում է Արարատի և Արմավիրի մարզերի մոտ 40.000հա դեգրադացված հողատարածքների ուսումնասիրություն և ծրագրային առաջարկների մշակում:

ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ մշակվում է ծրագիր մարզի շուրջ 17 համայնքներում իրականացնել հողերի աղազերծման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվում են աշխատանքներ մարզի ինքնաշատրվանող հորերի լիկվիդացիոն փականային ռեժիմի և կոնսերվացման ուղղությամբ: Մարզի Արազափ, Եղեգնուտ և Ջրառատ համայնքներում << Որդան կարմիր>> պետական արգելավայրի պահպանման և խնամքի, ինչպես նաև գիտական աշխատանքների իրականացման համար ներկայացվել է առաջարկություն պետական աշխատանքների իրականացման համար ներկայացվել է առաջարկություն պետական բյուջեից գումար հատկացնելու համար, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքի մեկուսացման, այլ տարածքներից ցանկապատով առանձնացման համար: Իրականացվել է ծրագիր Մեծամոր քաղաքին բնապահպանական նպատակներով պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների տնօրինման ուղղությամբ:

ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի միջոցով վաղ գարնանային հեղեղումների կանխարգելման նպակակով ուսումնասիրվել են գետերի հուների մաքրման և ափապատնեշների ամրացման ուղղությամբ անհրաժեշտ տարվելիք աշխատանքները.

<<Կոշ Ուշան>> հեղեղատարի /Աղավնատուն, Արագած և Ծաղկալանջ համայնքների վարչական տարածքներ/ 3կմ և <<Սելավ Մաստարա>> հեղեղատարի /Խանջյան և Լուկաշին համայնքներ վարչական տարածքներ/ 1,8կմ երկարությամբ, անհրաժեշտ է հունը մաքրել: Մեծամոր գետի հունը Արաքս և Մեծամոր համայնքների վարչական տարածքներում անհրաժեշտ է մաքրել շուրջ 1,3կմ: Արաքս գետի 18/2-19 սահմանային նշանակետում ողողատներից հանքարդյունահանող <<Արաքսի ավազան>> ՍՊԸ գործունեության արդյունքում գրանցվել է արգելաթմբի ողողման գործընթաց Մարգարա համայնքի տարածքում: Արգելաթմբի վերականգնման աշխատանքները ավարտվել են: Սև Ջուր և Արաքս գետի 16/5-16 սահմանային նշանակետի հատվածում ափապաշտպան արգելաթմբին մոտակա տարածքում գետնավազի արդյունահանման հետևանքով առաջացած փոսորակները դեռևս չեն լուծարվել: Խորոնք, Մրգաստան, Ծիածան և Դողս համայնքների վարչական տարածքներում անհրաժեշտ է Քասախ գետի հունի մաքրում՝ շուրջ 1,8կմ երկարությամբ:

Օգտակար հանածոների հանքավայրեր ՀՀ Արմավիրի մարզում առկա է 20 համայնքների վարչական տարածքներում: ՈՒսումնասիրված, հայտնաբերված և արձանագրված 39 հանքավայրերը և երեք համայնքների վարչատաչածքներում հետազոտվող/Արաքս/Էջմ/, Արգավանդ, Ջանֆիդա/ տարածքները տնօրինվում են 30 ՍՊԸ-ների, 4 ՓԲԸ-ների,1 ԲԲԸ-ի և 2

Ա/Ձ-ի կողմից: ՈՒշադրության կենտրոնում են մարզի մի շարք համայնքներում հանքարդյունաբերությամբ և ավազահանությամբ զբաղվող կազմակերպությունների կողմից մեծ թերություններով իրականացվող ռեկուլտիվացիոն աշխատանքները, մասնավորապես համայնքային հողատարածքներում առկա լքված ավազի և քարի հանքերը գտնվում են բարձիթողի վիճակում և շարունակում են աղտոտել շրջակա միջավայրը:

2016թ առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի և համայնքների հետ համատեղ մշակված սխեմայի և աղբահանության օրացույցային գրաֆիկի հիման վրա մարզի բոլոր 97 համայնքներում կազմակերպվում է աղբահանություն:

Բնակավայրերի մաքրման և աղբահեռացման ուղղությամբ Արմավիրի մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից պարբերաբար ստուգայցեր են կատարվել համայնքներ և տեղ գտած թերությունների վերացման նպատակով համապատասխան հանձնարարականներ են տրվել համայնքների ղեկավարներին՝ կազմակերպելով և համակարգելով վերջիններիս գործունեությունը տվյալ ոլորտում:

ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարի հանձնարարականի պահանջի համաձայն ՀՀ Արմավիրի մարզպետարանում ուսումնասդիրվել և քննարկվել է <<Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> օրհուսի կոնվենցիայի իրականացման Հայաստանի 5-րդ ազգային զեկույցի կազմման վերաբերյալ ներկայացված առաջարկները: Կոնվեվցիայի պահանջներին համահունչ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանը, մարզի տարածքում՝ շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակահնուըթյան մասնակցության և արդարադատության մատչելիության ուղղությամբ էական գործընթացներ է իրականացրել: Շրջակա միջավայրի աղտոտմանը և մարդկանց առողջության համար լուրջ վտանգ է ներկայացնում մարզի տարածքում ՀԱԷԿ-ի, Արմավիր և Մեծամոր քաղաքների կոյուղու կեղտաջրերի հավաքման և հեռացման ներկա վիճակը: Կեղտաջրերը առանց զտման լցվում են \Մեծամոր քաղաքին հարակից ջրահեռացման բաց ցանց, Մեծամոր գետ և այն օգտագործվում ՝ ոռոգման համակարգում, որը լուրջ հակասանիտարական իրավիճակ է ստեղծել, ինչպես Մեծամոր քաղաքի, այնպես էլ հարակից մյուս բնակավայրերի համար: կեղտաջրերի գարշահոտությունը մշտապես տարածված է այդ տարածաշրջանում: Հիշյալ փաստը արձանագրվել է վերջին 10 տարիների ընթացքում՝ տարածաշրջանի ջրային պաշարների վիճակի ուսումնասիրության համար ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովների կողմից, որի կազմում ընդգրկված են եղել մարզպետարանի աշխատակիցներ: Իրավիճակի վերաբերյալ տեղեկացվել է ՀՀ Կառավարությանը և բնապահպանության նախարարությանը: Կեղտաջրերի զտման կայանի կառուցումը մարզի համար առաջնահերթ կենսական նշանակություն ունի:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը այլ աղբյուրներով կազմել է 54,518.4հազ.դրամ:

2016թ. ՏԱՊ-ով նախատեսվում է 33,700.0հազ. դրամ:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ոլորտում փաստացի կատարվել են շուրջ 600.0հազ.դրամի ծրագրեր՝ համայնքային բյուջեի միջոցներով:

Բնապահպանության ոլորտի ֆինանսական ճեղքվածը մեղմելու նպատակով միջոցներ են ձեռնարկվում ֆինանսավորման այլ աղբյուրներ (միջազգային կազմակերպություններ, դոնորներ, բարերարներ) ներգրավելու ուղղությամբ:

Աղյուսակ 7. Բնապահպանության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Բարելավել բնապահպանական իրավիճակը Արմավիրի մարզում	Ընդերքից օգտակար հանածոների արդյունահանման համակարգը բարելավված է գետերի հունի մաքրման և ափապաշտպան	9 համայնք	9 համայնք

	պատնեշների ինժեներա-տեխնիկական աշխատանքներն իրականացվում են մշակված ծրագրին համապատասխան		
Արդյունք 1 Մարզային կառույցների՝ ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների և «Որդան Կարմիր» արգելավայրի գործունեության կազմակերպման համար ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծում **Միջոցառումներ** * «Որդան կարմիր» արգելավայրի գործունեության կազմակերպում, * ստորգետնյա ջրերի օգտագործման գործընթացին մարզպետարանի մասնակցության և հասարակության համար թափանցիկության ապահովում, * ապահովել համայնքների տարածքներում իրականացվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լսումներ, * մարզի բնապահպանական հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների կարողությունների զարգացում կենսաբազմազանություն, մոնիտորինգի կազմակերպման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար	«Որդան կարմիր» արգելավայրի կանոնադրությունը հաստատվել է, մարզում կան 50 ՀԿ, 2 հեռուստաընկերություններ, «Հայրենականչ» և «Հայ ֆերմեր» թերթեր 55 համայնքներում կազմակերպվել են քննարկումներ մարզի կենսաբազմազանության պահպանության ներկա վիճակի վերաբերյալ, տպագրվել է 3 հոդված: Կազմակերպվել է 3 հեռուստահաղորդում մարզի բնապահպանական հիմնախնդիրների լուսաբանման ուղղությամբ Մարզպետարանի մասնագետները ընդգրկված են միջգերտեսչական հանձնաժողովի կազմի մեջ և ակտիվ մասնակցություն ունենում հարցի ուսումնասիրման գործում Բոլոր համայնքներին տեղեկացվել է, ցանկացած նախագծի իրականացումից առաջ այն դնել հասարակական քննարկման Մարզում գործող բնապահապանական հասարակական կազմակերպությունների և մարզային լրատվամիջոցների ուժեր մարզպետարանը մոբիլիզացնում է կենսաբազմազանության առկա վիճակի պարզաբանման ու նրանց պահապանության ու տարածման կազմակերպմանը	7 համայնք 55 համար 14 համար	7 համայնք 55 համար 12 համայնք 23 համայնք 97 համայնք 3 ՀԿ-ներ 2 ՀԸ-ներ՝ «ԱԼՏ» և « Լույս»
Արդյունք 2 Հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության արդյունավետության բարձրացում Խնդիրներ * Գետերի հունի մաքրում, ափապատնեշների կառուցում * Հողերի մելիորացիա * Փակ ջրահեռացման ցանցի վերակառուցում, վերանորոգում, բաց ցանցի մաքրման աշխատանքների շարունակում	Հողերի դեգրեդացիայի, հեղեղումների հետևանքով ջրածածկման և հողատարման կանխարգելման համար պետական բյուջեից հատկացված միջոցներով իրականացվում է գետերի հունի մաքրման և ափապատանեշի ամրացման աշխատանքներ	15 համայնք	15 համայնք
	Դեռևս չեն կատարվել. «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ուսումնասիրվում, քարտեզագրվում է հողատարածքների պարարտացման արդյունավետ համակարգ:		

	*Մաքրվել և վերանորոգվել է 8 համայնքների վարչական տարածքներով անցնող 45 կմ երկարության ջրահեռացման բաց ցանցը:		
Արդյունք 3 Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգերի կատարելագործում * Քաղաքների և խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման ծրագրերի մշակում * Միջհամայնքային աղբավայրերի նախագծում, ՏԻՄ-երի աջակցություն, աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար * Կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայանների ստեղծում	Մարզում թափոնների կառավարման համար պայմաններ ապահովված են Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ Մարզի քաղաքներում մշակված աղբավայրերի կառավարման պլաններ, ցանկապատված գործող աղբավայրեր՝ Էջմիածին, Մեծամոր, Արմավիր, միջհամայնքային աղբավայրերի մշակված նախագծեր 4 համայնքներ, որոնք ունեն աղբահեռացման պայմանագրեր՝ 28	97 համայնք 15 համայնք Փարաքարում կառուցվել է կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայան	97 համայնք 15 համայնք 1 համայնք
Արդյունք 4 Բնապահպանական հիմնախնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում. Խնդիրներ՝ բնապահպանական ծրագրերի իրականացման համար հասարակական կազմակերպությունների աջակցության տրամադրում	Իրականացված ծրագրերի վերաբերյալ նյութերը տեղադրված են մարզպետարանի կայք էջում, հրատարակված հոդվածներ, հեռուստահաղորդումներ՝ 4	«Հայրենական չ» թերթ, «Լույս» հեռուստա-ընկերություն	

6.3. Խնդիրները

Մարզի բնապահպանական հիմնախնդիրները կապված են աղակալված ու դեգրադացված հողերի մելիորատիվ միջոցառումների, հողերի անապատացման դեմ պայքարի, կենսաբազմազանության պահպանման, կանաչապատ տարածքների ընդարձակման ու պահպանության, արհեստական անտառածածկ տարածքների և դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման, հողային, ջրային պաշարների, օգտակար հանածոների պահպանման, արդյունավետ օգտագործման, թափոնների հավաքման, տեղափոխման, տեղադրման, վնասազերծման, վերամշակման և բնակչությանը խմելու ջրով մատակարարելու իրականացման հետ:

6.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Բնապահպանական առկա հիմնախնդիրները ծագել են հիմնականում մարդկանց ոչ ճիշտ դաստիարակության և կառավարման ոչ ճիշտ համակարգի արդյունքում:

Առաջնահերթ նպատակն է մանկուց դաստիարակել ու կազմակերպել մարդու բնապահպանական մտածելակերպը, փոխել բնապահպանության բնագավառի ներկայիս առկա կառավարման համակարգը, հասարակության յուրաքանչյուր անդամին տեղեկացնել առկա իրավիճակի մասին, ներկայացնել վտանգված շրջակա միջավայրի ունեցած բացասական ազդեցությունը մարդու և կեսաբազմազանության վրա:

Յուրաքանչյուր մարդ պետք է զգա շրջակա միջավայրի ներկա վիճակի բացասական ազդեցությունն իր կենսագործունեության վրա և ընդգրկվի բնապահպանական հիմնախնդիրների լուծման գործընթացներում:

7. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

7.1. Քաղաքականության վերլուծություն

Մարզում տուրիզմը թերևս թույլ է զարգացած, պատճառը տուրիզմի հիմնական ենթակառուցվածքների բացակայությունն է և մարզի տուրիստական ռեսուրսների վատ ուսումնասիրությունը: Մարզում զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է զբոսաշրջության զարգացման համալիր ծրագրի մշակում, որն իր մեջ կընդգրկի առկա ներուժի ամբողջական ուսումնասիրությունը, իրավիճակի գնահատականը և զարգացման ուղղությունների նախանշումը: Արդյունավետ գործելու դեպքում մարզի տնտեսության մեջ զբոսաշրջության մասնաբաժինը կարելի է հասցնել ցանկալի արդյունքի, որը հետաքրքրություն կառաջացնի միջազգային կազմակերպությունների կողմից ներդրումներ իրականացնելու առումով, որը և անմիջական դրական ներգործություն կունենա մարզի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:
Ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ է.
1) Ստեղծել այցելուների կենտրոն, որը այցելուներին կտրամադրի տեղեկություններ Արմավիրի մարզի տուրիստական հնարավորությունների վերաբերյալ, կհամագործակցի Հայաստանի և արտերկրի տուր-օպերատորների հետ
2) Ստեղծել գինու, կոնյակի համտեսի դահլիճ «ՄԱՊ» ՓԲԸ-ում
3) Ստեղծել Արմավիր քաղաքում բրուտագործության կենտրոն
4) Վերականգնել զբոսաշրջային տեսանկյունից մեծ հետաքրքրություն ներկայացնող սահմանամերձ Բագարան համայնքի Շուշանիկ եկեղեցին
5) Կառուցել ռեստորանա-հյուրանոցային համալիրներ, քոթեջներ
6) Առանձնացնել հենակետային տուրիստական կենտրոնները և դրանց շուրջ ստեղծել ենթակառուցվածքներ՝ ավտոկանգառներ, սննդի օբյեկտներ, հուշանվերների խանութներ
7) Ընդլայնել ամենամյա կազմակերպվող տոնակատարություններ
8) Կազմակերպել հեծանվավազքի միջոցառումներ
9) Կազմել և հրատարակել քարտեզներ՝ ըստ թեմատիկ երթուղիների
10) Ստեղծել Արմավիրի մարզի տուրիստական ինտերնետային կայք
11) Կազմակերպել մարզի գովազդը արտաքին և ներքին տուրիստական շուկաներում:
12) Սփյուռքի հետ կապերի համատեքստում, արտասահմանում գտնվող հայության շրջաններում բարձրացնել Արմավիրի զբոսաշրջային գրավչությունը, ապահովել բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը մեր հայրենակիցների համար:

Մարզի գյուղատնտեսական մասնագիտացումը հետաքրքիր առավելություն է ներկայացնում գյուղական տուրիզմի զարգացման համար: Էկոլոգիապես մաքուր և համային բարձր արժեքներով օժտված գյուղատնտեսական մթերքները առանձնակի նշանակություն ունեն տուրիզմի տեսանկյունից, որը կարող է դառնալ տուրիստների սպասարկման կարևոր բաղկացուցիչ մասերից մեկը:

Տուրիզմի զարգացման համար խոչընդոտ է հանդիսանում ինչպես համապատասխան տարածքներում հյուրանոցային հարմարությունների և հյուրընկալական տների սակավությունը, կենցաղային ոչ բավարար պայմաններով, այնպես էլ ճանապարհների անբարեկարգ վիճակն ու տրանսպորտի բացակայությունը:

7.2. Իրականացման առաջընթացը

Զբոսաշրջության զարգացման գործում կարևորվում է մարզում առկա հոյակերտ եկեղեցիների դերը:

Զբոսաշրջության առումով Արմավիրի մարզն առավել գրավիչ դարձնելու նպատակով իրականացվում են մարզի տեսարժան վայրերի, պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների գովազդման աշխատանքներ ինչպես մարզպետարանի ինտերնետային կայքով, այնպես էլ տուրիստական գործակալությունների միջոցով:

Արտաքին կապեր. 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում արտաքին կապերի ոլորտում մարզը շարունակել է համագործակցությունը մի շարք երկրների տարածքային միավորների, միջազգային և տեղական բարեգործական կազմակերպությունների հետ ինչպես նոր, այնպես էլ նախկինում հաստատված կապերով՝ մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանը նպաստող ծրագրեր իրականացնելու, ներդրումներ ներգրավելու նպատակով, մասնավորապես՝

07.04.2016թ. ստորագրվել է նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Վոլոգդայի մարզի կառավարության միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագիրը:

11.04.2016թ. մարզի Նորավանի միջնակարգ դպրոցում բացվել է Չինական մշակույթի կենտրոն, որը կյանքի է կոչվել «Դպրոց-կենտրոնների միություն» իրավաբանական անձանց միության և Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ: Ծրագրի նպատակն է ամրապնդել Չինաստանի հետ բարեկամական կապերը և ուսումնասիրել չինական լեզուն ու մշակույթը:

22-27.04.2016թ. մարզ է այցելել Սլովակիայի Հանրապետության Տրնավայի մարզի մշակութային պատվիրակությունը: Այցելել են մարզի և հանրապետության տարբեր պատմամշակութային և տեսարժան վայրեր, ծանոթացել հայկական մշակույթին: 2016թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին նախատեսվում է մարզի պատվիրակության պատասխան այցելությունը Տրնավայի մարզ:

27.04.2016թ. ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանն ընդունել է ՌԴ Վոլոգդայի նահանգից ժամանած պատվիրակությանը, որը գլխավորում էր մարզի առևտրատնտեսական զարգացման վարչության պետ Դիմիտրի Անտոնովը: Պատվիրակության կազմում էին Վոլոգդայի «Սպառողների միություն» հասարակական կազմակերպության նախագահը, «Մակսի» առևտրական ցանցի կոմերցիոն տնօրենը, «Հյուսիսային առևտրի տուն» ՍՊԸ-ի հիմնադիրը, «Արսենալ Վին» ընկերության բաժնետերը: Պատվիրակությունն Արմավիրի մարզում է ապրիլի 7-ին ՀՀ կառավարությունում ՀՀ Արմավիրի մարզպետարանի և ՌԴ Վոլոգդայի մարզի կառավարության միջև Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի և Վոլոգդայի նահանգապետ Օլեգ Կուվշիննիկովի կողմից ստորագրված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում: Պատվիրակության անդամները հանդիպել են մարզի արտադրական ձեռնարկությունների պատասխանատուների հետ, ծանոթացել նրանց կողմից առաջարկվող տեսականուն, այցելել համապատասխան ձեռնարկություններ:

«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից մարզի Նոր Արմավիր համայնքում իրականացվել է մանկական խաղահրապարակի տեղադրում մանկապարտեզի տարածքում ծրագիրը՝ 1.22 մլն դրամ արժողությամբ:

«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվում է «Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» ծրագիրը՝ 150.0 մլն դրամ ընդհանուր արժողությամբ, որից օգտվելու հնարավորություն կունենան մարզերի ուսանողներն ու ավագ դպրոցների աշակերտները:

«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից մարզի Տարոնիկ համայնքում իրականացվում է «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագիրը՝ 2.5 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ:

01.09.2016թ. ամբողջությամբ կավարտվեն «Հայաստան» համահայկական հիմնադրամի Տորոնտոյի տեղական մարմնի բարերարներ տեր և տիկին Նալբանդյանների հովանավորությամբ դեռևս 2014թ. դեկտեմբերից սկսված մարզի Նալբանդյան գյուղի միջնակարգ դպրոցի վերանորոգման (236.76 մլն դրամ) և կահավորման (43.4 մլն դրամ) ծրագրերը:

7.3. Խնդիրները

Ոլորտի շարունակում է խնդիր մնալ մարզի տուրիստական հնարավորությունների լիարժեք մոնիտորինգը:

Մարզում տուրիզմի զարգացման նպատակով ենթակառուցվածքների աշխատանքների բարելավումը /հյուրանոցային հնարավորությունների ստեղծումը և ընտանեկան տուրիզմի զարգացման համար հնարավորությունների ստեղծումը/:

Տուրիզմի զարգացման նպատակով նոր ներդրումների և նոր ներդրողների որոնման աշխատանքների շարունակումը:

7.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Զբոսաշրջության ոլորտում վերհանված խնդիրների վերլուծության անհրաժեշտություն, ունեցած պատմամշակութային կոթողների և հուշարձանների նորովի ներկայացում և գովազդի ճիշտ կազմակերպում, ոլորտի զարգացմանն ուղղված նոր քայլերի իրականացում, համատեղ գիտաժողովների կազմակերպում՝ հատկապես մարզից արտերկրում գտնվող հայրենակից գործարարների ընդգրկմամբ:

8. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

8.1. Քաղաքականության վերլուծություն

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական դպրոցների, առողջապահական, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան և վարչական շենքերի հիմնանորոգման, բնակարանաշինության, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Կրթական, մշակութային և մարզական օբյեկտեների հիմնանորոգումների համար նախատեսված միջոցները ներկայացված են համապատասխան ոլորտների հատվածներում:

8.2. Իրականացման առաջընթացը

Հայաստանի Հանրապետության 2016թ. պետական բյուջեով ՀՀ Արմավիրի մարզպետարանի ծրագրերով մարզին հատկացվել է 146,898,100.0դրամ, որի շրջանակներում նախատեսված է իրականացնել՝

1. <<Մշակութային օբյեկտների հիմնանորոգում>> - 50,000,000 դրամով նախատեսված է իրականացնել Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները:

2.<<Կրթական օբյեկտների հիմնանորոգում>> -96,898,100 դրամով նախատեսված է իրականացնել Ոսկեհատ, Փարաքար, Արտիմետ, ք.Արմավիր համայնքների մանկապարտեզի վերանորոգման և Թաիրով գյուղի միջնակարգ դպրոցի շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրության և վերանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

2016թ. պետական բյուջեով նախատեսված աշխատանքների ընթացքը կազմակերպելու նպատակով կազմվել են շինարարական աշխատանքների գնման հրավերները և բաց

ընթացակարգով կայացած մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել Ոսկեհատի, Փարաքարի, ք.Արմավիրի համայնքների մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների կատարման N ՀՀ ԱՄ – ԲԸԱՇՁԲ-16/01 ծածկագրով մրցույթի հաղթող մասնակիցները, որոնց հետ կնքվում են շինարական աշխատանքների կապալի պայմանագրեր, Արտիմետ համայնքի մակապարտեզի /ծածկագիր N ՀՀ ԱՄ – ԲԸԱՇՁԲ-16/02/ վերանորոգման աշխատանքների կատարման համար հաղթող մասնակիցը որոշվում է, Շենիկ համայնքի մշակույթի տան վերոնորոգման աշխատանքների համար հայտարարված մրցույթը կկայանա 21.07.2016թ.:

Վարչական վերահսկողության մասով ստուգվել են 7 համայնքների քաղաքաշինական գործունեությունները և համապատասխան արձանագրությունները ներկայացվել է մարզպետի քննարկմանը:

Կազմվել է ՀՀ Արմավիրի մարզի 2017-2019թթ. քաղաքաշինության, ճանապարհաշինության և էներգետիկայի ոլորտների ՄԺԾ ծրագրերը և ներկայացվել է ՀՀ քաղաքաշինության, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ էներգետիկայի նախարարություններին:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը կազմել այլ աղբյուրներով և համայնքի միջոցներով կազմել է 1,316,980.0հազ.դրամ:

2016թ. ոլորտի իրական ներդրումների չափը կազմում է շուրջ 379,158.7հազ. դրամ:

2016թ. ՄԶԾ-ով այլ աղբյուրներով իրականացվող ծրագրերի խնդիրը (1,205,500.0հազ. դրամ) բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի կատարվել են շուրջ 18,527.3հազ.դրամի ծրագրեր՝ ՀՀ պետական և համայնքային բյուջեների միջոցներով:

Աղյուսակ 8. Քաղաքաշինության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Արդյունք 1. Բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում	Հիմնանորոգված տանիքների մակերեսը	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներ 1000 քառ.մ	
Միջոցառումներ Տանիքների հիմնանորոգում			
Արդյունք 2. Համայնքների գլխավոր հատակագծերի և շին.օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում **Միջոցառումներ** Շին.օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	Շին. օբյեկտների քանակը	39	

Ծանոթություն՝ Կրթական օբյեկտների մասով ծրագրերը ներառված են «Կրթություն» բաժնում

8.3. Խնդիրները

Մարզում քաղաքաշինական աշխատանքների կատարման համար առաջանում են որոշակի խնդիրներ՝ կապված բյուջետային հատկացումների փոքր չափաբաժինների հետ, որի արդյունքում տվյալ օբյեկտի հիմնանորոգման աշխատանքները ձգձգվում են 7-10 տարի:

8.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է իրականացնել ոլորտի հիմնախնդիրների ճիշտ պլանավորումը և հետևողականորեն իրականացնել դրանց իրագործումը:

9. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

9.1. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

9.1.1. Քաղաքականության վերլուծություն

Ճանապարհաշինության ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է առկա ճանապարհային ցանցի հիմնանորոգմանը, վերականգմանն ու պահպանմանը: Ոլորտում դեռևս շարունակում է առաջնային լինել ճանապարհների հիմնանորոգման հարցը, միջպետական, հանրապետական, մարզային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը՝ մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով տասնյակ տարիներ չեն նորոգվել, որի արդյունքում քանդվել են և դարձել տրանսպորտային միջոցների երթևեկության համար դժվարանցանելի, ճանապարհների ժամանակից շուտ շարքից դուրս գալու պատճառ է հանդիսնում վատ կազմակերպված ջրահեռացումը, նորոգման կարիք ունեն նաև կամուրջները, ուստի կամուրջների պահպանման համար անհրաժեշտ է նախատեսել ֆինանսական միջոցներ: 2016թ. ևս ծրագրվում է ավելացնել և թարմացնել երթուղիները սպասարկող շարժակազմը, իսկ ճանապարհաշինության բնագավառում՝ ավարտել ամբողջ ճանապարհային ցանցի նորոգումը:

9.1.2. Իրականացման առաջընթացը

ՀՀ Արմավիրի մարզի ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է՝ 593.9կմ, որից 109.0կմ միջպետական նշանակության, 86.1կմ հանրապետական և 398.2կմ մարզային նշանակության:

Պետական բյուջեից ՀՀ Արմավիրի մարզպետարանին մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման և ձմեռային պահպանման համար հատկացվել է 39.3 մլն. դրամ, որից 33.8 մլն. դրամը հատկացվել է 29.3 կմ երկարությամբ ճանապարհների ընթացիկ պահպանման ու շահագործման համար, իսկ 5.5 մլն. դրամը 47կմ ձմեռային պահպանության համար:

Վերահսկողություն է իրականացվում Տ-3-50 «Արմավիր-Նորապատ-Մրգաշատ-Արևիկ-Երասխահուն» 18.9 կմ երկարությամբ մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ և Տ-3-13 «Տ-3-51 –Բամբակաշատ» նորոգվող 0.8կմ հատվածի վրա:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է մարզային նշանակության ճանապարհների (398.2կմ) 53%-ը, ըստ տարածաշրջանների:

Մարզի գրեթե բոլոր համայնքները կապված են տրանսպորտային կապով մարզկենտրոնի հետ: Մարզի համայնքներից մարզկենտրոն և տարածքային կենտրոնների ուղղություններով գործում է 11 ավտոբուսային երթուղիներ և 9 միկրոավտոբուսային երթուղիներ, իսկ մարզի համայնքներից դեպի մայրաքաղաք գործում է 14 ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներ:

ՄԶԾ-ով 2016թ. ոլորտի կարիքների գնահատումը կազմել է 3,170,526.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով ոլորտի իրական ներդրումների չափը կազմում է շուրջ 336,390.0հազ. դրամ:

Այլ աղբյուրներով իրականացվող միջոցառումների խնդիրը բաց է մնում /1,370,000.0հազ. դրամ/, ֆինանսավորման աղբյուրները հստակեցված չեն:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ փաստացի կատարվել են շուրջ 72,499.5հազ.դրամի ծրագրեր՝ պետական բյուջեի և համայնքային բյուջեի միջոցներով:

Աղյուսակ 9. Ճանապարհաշինության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի

Արմավիրի մարզի ճանապարհային ցանցի բարելավում	1.1. Միջպետական և հանրապետական ճանապարհների նորոգում, (կմ)	45 կմ	-
	1.2. Մարզային նշանակության ճանապարհների նորոգում, (կմ)	35 կմ	18.9
	1.3. Համայնքային նշանակության ճանապարհների նորոգում, (կմ)	20կմ	20 կմ
	1.4 Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա միջպետական ու հանրապետական նշանակության ճանապարհների երկարությունը	175.6 կմ	175.6 կմ
	1.5. Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա մարզային ճանապարհների երկարությունը	77.1 կմ	77.1 կմ
	1.6. Ընթացիկ և ձմեռային պահպանության ենթակա համայնքային նշանակության ճանապարհների երկարությունը	12 կմ	12 կմ

9.1.3. Խնդիրները

Միջպետական, հանրապետական, մարզային և միջհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը՝ առանձին հատվածներ երկարատև շահագործումից հետո դարձել են գրեթե անանցանելի, ինչպես նաև մարզի կամուրջների հիմնանորոգման և պահպանման խնդիրը:

9.1.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Անհրաժեշտ է ապահովել տարվա բոլոր եղանակներին տրանսպորտային միջոցների հուսալի և անխափան երթևեկությունը, մարզային նշանակության ճանապարհների երկարակեցությունը, շահագործումը և պահպանումը, համայնքների և մարզկենտրոնի միջև մշտական տրանսպորտային կապը:

Անհրաժեշտ է բարելավել ճանապարհաշինական փաստաթղթերի մշակման, մարզային ենթակայության ճանապարհների շինարարության և հիմնանորոգման կառավարման գործընթացները:

9.2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

9.2.1. Քաղաքականության վերլուծություն

Այս ոլորտի քաղաքականությունը հիմնականում ուղղված է բնակչությանը կայուն, հասանելի, մատչելի և որակյալ խմելու ջուր մատակարարելու խնդրին, որն ուղղակիորեն կնպաստի աղքատության կրճատմանը մարզում:

Ոլորտում անհրաժեշտ են զգալի ներդրումներ, ներառյալ ջրամատակարարման առկա համակարգերի պահպանման և վերականգնման, ոլորտում գործող ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի արդիականացման համար անհրաժեշտ ֆինանսավորումը:

Ջրամատակարարող ընկերությունների կառավարման համակարգի բարելավումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը: Այդ ընկերությունների ֆինանսական կենսունակությունը պայմանավորված է շահագործման ծախսերի արդյունավետությամբ և վճարների հավաքագրման մակարդակի բարելավմամբ: Բացի այդ, անհրաժեշտ է նվազեցնել ջրի կորստի մակարդակը, որը հիմնականում ջրամատակարարման ցանցերի անմխիթար վիճակի հետևանք է:

9.2.2. Իրականացման առաջընթացը

ՄԶԾ-ով 2016թ. խմելու ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում կարիքների գնահատումը կազմում է՝ 2,288,050.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով իրական ներդրումների չափը կազմում է 2,238,050.0հազ. դրամ:

Այլ աղբյուրներով իրականացվող միջոցառումների խնդիրը բաց է մնում /50,000.0հազ. դրամ/, ֆինանսավորման աղբյուրները հստակեցված չեն:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ իրականացվել են շուրջ 25,029.9հազ.դրամի ծրագրեր՝ համայնքային բյուջեի միջոցներով:

Աղյուսակ 10. Ջրամատակարարման ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Արմավիրի մարզում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում	2.1. Նորոգված ու կառուցված խմելու ջրագծերի երկարությունը Թիրախ՝ 2013թ.նորոգված գծեր, կառուցված գծեր, կմ	4.5 կմ	-
	2.2. Նորոգված ու կառուցված ջրահեռացման գծերի երկարությունը, կմ Թիրախ՝ 2013թ.նորոգված, կառուցված, կմ	0.6 կմ	-
Միջոցառումներ 2.1. Խմելու ջրի խորքային հորերի հորատում, ներտնտեսային ցանցերի հիմնանորոգում	Ֆինանսավորման կարիքը, մլն. դրամ		-
2.2.Ջրահեռացման համակարգերի նորոգում /մաքրման կայանի կառուցում/	Ֆինանսավորման կարիքը, մլն. դրամ.		-

9.2.3. Խնդիրները

Մարզի համայնքների խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ցանցերի հիմնանորոգման, ինչպես նաև մարզի բնակավայրերում տեղադրված հրշեջ հիդրանտների վերանորոգման և նորերի տեղադրման խնդիրը: Ջրահեռացման բնագավառում առաջնահերթ խնդիր է հանդիսանում մաքրման կայանի կառուցումը, կոյուղու համակարգի հիմնանորոգումը և փոխումը:

Խմելու ջուրը ռազմավարական ռեսուրս է, ոլորտում իրականացված ծրագրերը անշուշտ մեղմել են իրավիճակը, սակայն մարզի մի շարք համայնքներում դեռևս շարունակում են մնալ հետևյալ հիմնախնդիրները.

1) ջրամատակարարման համակարգերի մաշվածություն և քայքայվածություն, պահպանման և վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայություն, որը բերում է արտահոսքի ու կորուստների (հատկապես ներհամայնքային ցանցերում)
2) համայնքների կողմից ուշադրության պակաս
3) գանձումների ցածր մակարդակ
4) ջրի որակի խնդիրներ
5) ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգերի անբավարար վիճակը կամ դրանց բացակայությունը:

9.2.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում: Գլխամասային կառույցները չունեն սանիտարական պահպանման գոտիներ, բնակչությանը տրվող ջուրը հիմնականում չի վարակազերծվում:

Հաջորդ տարվա բյուջետային հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն մարզի զարգացման ծրագրով նախատեսված առաջնահերթությունները:

9.3. ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

9.3.1. Քաղաքականության վերլուծություն

ՀՀ Արմավիրի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 97 համայնքներց 87-ը գազաֆիկացված են: Մնացել է գազաֆիկացնելու Երվանդաշատ, Բագարան, Շենիկ, Արտամետ, Լեռնամերձ, Արգինա, Արաքս (Էջմ.), Մեծամոր, Հայկաշեն, Կողբավան համայնքները, Բաղրամյան համայնքի «Ծածկ» թաղամասը:

9.3.2. Իրականացման առաջընթացը

2016թ. ՄԶԾ-ով գազամատակարարման ոլորտում կարիքների գնահատումը կազմում է 829,300.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով համայնքային բյուջեի միջոցներով իրական ներդրումների չափը կազմում է 27,800.0հազ.դրամ:

Ընդհանուր առմամբ 2016թ. ՄԶԾ-ով այլ աղբյուրներով իրականացվող ծրագրերի խնդիրը (801,500.0հազ.դրամ) բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ իրականացվել են ծրագրեր չեն իրականացվել:

Աղյուսակ 11. Գազամատակարարման ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Արդյունք Գազ ունեցող բնակարանների թիվը աճել է	3.1. Գազ ունեցող համայնքների թիվը	87	87
	3.2.Գազ ունեցող բնակարանների թիվը	47400	46940
Միջոցառումներ Գազամատակարարման գծերի տեղադրում համայնքներում	Ֆինանսավորման կարիքը, մլն. դրամ	1090.0	50.6

9.3.3. Խնդիրները

Մարզի գազամատակարարման ցանցերի զարգացումը, մարզի համայնքների գազաֆիկացման գործընթացի ավարտումը:

9.3.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Գազամատակարարման ոլորտում իրականացվելիք ներդրումային քաղաքականությունը պետք է ուղղված լինի գազամատակարարման հասանելիության աստիճանի բարձրացմանը: Անհրաժեշտ է գազիֆիկացման աշխատանքներ իրականացնել թվով 11 համայնքներում՝ գյուղերի հետագա զարգացման համար նպաստավոր սոցիալական պայմաններ ստեղծելու համար:

9.4. Էներգետիկա

Մարզում նախատեսվում է կառուցել 1060ՄՎտ դրվածքային հզորությամբ նոր միջուկային էներգաբլոկ: Նոր միջուկային էներգաբլոկի թողարկումը կապահովի Հայաստանի էներգետիկ անվտանգության ու անկախության, ինչպես նաև բնապահպանական անհրաժեշտ մակարդակ: Առաջիկա տարիներին կմեկնարկվի նոր էներգաբլոկի շինարարությունը, որն էլ իր հերթին կնպաստի մարզում հարյուրավոր նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2016թվականի ՄԶԾ-ով էներգետիկայի ոլորտում կարիքների գնահատումը կազմում է 355,350.0հազ. դրամ:

2016թ. ՏԱՊ-ով համայնքային բյուջեի և մասնավոր ներդրողների միջոցներով նախատեսվում է իրականացնել շուրջ 355,350.0հազ.դրամի ծրագրեր:

2016թ. հուլիսի 1-ի դրությամբ իրականացվել են շուրջ 12,064.5հազ.դրամի ծրագրեր՝ համայնքային բյուջեի միջոցներով:

10. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

10.1. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

10.1.1. Քաղաքականության վերլուծություն

Հայաստանի Հանրապետության մարզերում՝ այդ թվում նաև Արմավիրի մարզում, ներդրված տարածքային կառավարման համակարգը չնայած գործում է արդյունավետությամբ, բայց այն շարունակական վերանայման և կատարելագործման կարիք ունի, որի վկայությունն է դեռևս 2009 թվականից շրջանառության մեջ դրված «ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագիծը, որի վերաբերյալ Արմավիրի մարզպետարանում այն քննարկվել և ներկայացվել է առաջարկություններ:

ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1793-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքը, ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 2-ի N329-Ն որոշմամբ ենթարկվեց փոփոխությունների: Այս նոր հաստատված կազմակերպական կառուցվածքը մարզպետարանին հնարավորություն է տալիս կառավարման գործում լուծելու առկա հիմնախնդիրները և մարզպետի լիազորությունները արդյունավետ իրականացնելու: Այս փոփոխությունների դինամիկան առաջիկայում ևս պետ է շարունակվեն, քանի որ համակարգը պետք է համընթաց լինի առկա զարգացումներին: Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրման արդյունքում Արմավիրի մարզն ինտերնետում ներկայացված է պաշտոնական կայք-էջով՝ http://armavir.mtaes.am, որը հնարավորություն է տալիս արագ ապահովել անհրաժեշտ տեղեկատվությունը և հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը: Էլեկտրոնային կառավարման բնագավառում արդեն որոշակի քայլեր արվել են, առկա է տվյալների բավարար բազա, բայց այն կատարելագործման կարիք ունի: Էլեկտրոնային փաստաթղթաշարժի Mulberry համակարգը 2010թ. մարտ ամսից վերջնականապես ներդրվել է Արմավիրի մարզպետարանում:

Պետական կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կարևոր է նաև մարզպետարանի և նրանում յուրաքանչյուր աշխատատեղի համապատասխանեցումը ժամանակակից չափանիշներին՝ հագեցնելով մարզպետարանը համապատասխան տեխնիկայով, համակարգչային ծրագրերով և տեղեկատվության ստացման ժամանակակից միջոցներով:

2016թ. ևս տարածքային կառավարման բնագավառում գործունեության կարևորագույն ուղղություններն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի բարեփոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կարևորվում է ՀՀ կառավարության կողմից պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերի ու չափորոշիչների մշակումը և սահմանումը, ինչը կնպաստի ինչպես այդ

լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:

3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին, ելնելով զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

4) Վերանայել մարզային զարգացման պլանավորման բնագավառում մարզպետարանի գործառույթները, պարտականությունները ու իրավասությունները՝ հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում մշակված ու գործադրված ինստիտուցիոնալ համակարգը

5) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ՀՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:

6) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

7) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրող մեթոդաբանական օգնությունը:

8) Մարզպետարանի աշխատակազմին ամրացված պետական սեփականություն հանդիսացող գույքի համապարփակ հաշվառման և օգտագործման, մարզի վարչական տարածքում գտնվող և համայնքային սեփականություն չհանդիսացող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների, մարզպետարանի ենթակայության առևտրային կազմակերպություններում պետության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորությունների արդյունավերտ իրականացում:

2016թ. ևս կշարունակվի քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացը:

10.1.2. Իրականացման առաջընթացը

Մարզում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվել է պետական և համայնքային շահերի ներդաշնակման, հանրապետական գործադիր մարմինների և նրանց տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման հիման վրա:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների աշխատանքը:

2016 թվականի առաջին կիսամյակում Արմավիրի մարզպետի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղություններն ու առաջնահերթություններն են՝

- Մարզում ՀՀ կառավարության Կայուն զարգացման ռազմավարական ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, բնակչության եկամուտների աճը և աղքատության կրճատումը.
- Բնակչության զբաղվածության աճը և գործազրկության մակարդակի նվազումը.

- Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների ապրանքայնության բարձրացումը.
- Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավումը.
- Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի բարձրացումը.
- Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացումը.
- Մարզպետարանի կարողությունների ուժեղացումը և տարածքային կառավարման արդյունավետության բարձրացումը.
- Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների ընդլայնումը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացման օժանդակումը.
- Հանրային կառավարման համակարգում, հրապարակայնության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների արմատավորումը.
- Արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը.
- Միջազգային և դոնոր կազմակերպությունների, հիմնադրամների հետ տարվող աշխատանքների արդյունավետության բարձրացումը և նրանց կողմից նպատակային ծրագրերի իրականացման օժանդակումը.
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը.
- Մարզում պետական ֆոնդի հողերի վերաբաշխման կազմակերպման, հողաշինության և հողային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման օժանդակումը, հողերի միավորման ծրագրերի և հողի շուկայի ձևավորման աջակցումը.
- Կրթության ոլորտում կառուցվածքային և ընթացիկ բովանդակային բարեփոխումների իրականացման արդյունավետության բարելավման ապահովումը.
- Կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների ուսուցման և դաստիարակության, նրանց բնականոն զարգացման ու սոցիալական ինտեգրացիայի համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.
- Մշակութային և սպորտային ծրագրերի մշակումը և դրանց կատարման ապահովումը.
- Առողջապահության բնագավառում պետական նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը, առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը.
- Համայնքային բյուջեների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը.
- Քաղաքային և գյուղական համայնքների քաղաքաշինական գլխավոր փաստաթղթերի կազմման աշխատանքների կազմակերպումը.
- Մարզում զորակոչի և զորահավաքային նախապատրաստության աշխատանքների համակարգումը և աջակցությունը.
- Արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության պաշտպանության կազմակերպման և իրականացման ապահովումը:

Հաշվետու ժամանակաշրջանում մարզպետի կողմից հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ և 4 խորհրդակցություն: Մարզխորհրդի նիստերում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակին առնչվող հարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետի կողմից ընդունվել և արձակվել են համապատասխանաբար 90 որոշումներ և 57 կարգադրություններ: Մուտքագրվել է ընդհանուր քանակով 7398 և առաքվել 2190 փաստաթուղթ:

Մարզպետի մոտ յուրաքանչյուր ամսվա հինգշաբթի օրերին կազմակերպված ընդունելություններին ընդհանուր թվով մասնակցել են 167 քաղաքացիներ, որոնցից 49-ը իրենց հարցադրումներին ստացել են բանավոր սպառիչ պատասխաններ, ինչպես նաև լուծվել են

նրանց կողմից բարձրացված բազում հարցեր: Մարզպետարան են ստացվել քաղաքացիների ընդհանուր թվով 961 դիմումներ, 5 առաջարկություններ և 19 բողոքներ: Մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության և դիմումների մասին տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ կառավարության 11.12.2014թ. N 1458-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2015-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թվականի տարեկան աշխատանքային պլանը, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 12-ի թիվ 134-Ա հրամանի հրամանով: Հաշվետու ժամանկաշրջանում զարգացման ծրագրերի ուղղությամբ մարզպետարանի և համայքների սերտ համագործակցության արդյունքում կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել նոր աշխատատեղերի ստեղծմանը միտված թվով 33 ներդրումային ծրագրերի առաջարկներ:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի հաստիքային միավորների թիվը կազմում է 129, որից 109-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոններ են:

Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում հայտարարվել է 1 մրցույթ, որի արդյունքում պաշտոնի է նշանակվել 1 մասնագետ, իսկ մարզպետարանի աշխատակազմում հայտարարվել է 3 մրցույթ, որի արդյունքում պաշտոնի է նշանակվել 3 մասնագետ, կնքվել է 2 ժամկետային աշխատանքային պայմանագիր, քաղաքացիական 1 ծառայողի պարտականությունները համարվել է դադարած /մահվան կապակցությամբ/, լուծվել են ժամկետային՝ 9, անորոշ ժամկետով կնքված՝ 1, սեզոնային՝ 2 աշխատանքային պայմանագրեր: 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ աշխատակազմում քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների թիվը 3-ն է: 4 քաղաքացիական ծառայողի շնորհվել է քաղաքացիական ծառայության համապատասխան և 1 քաղաքացիական ծառայողի ավելի բարձր դասային աստիճան, մարզպետարանի աշխատակազմում ատեստավորվել են 1 առաջատար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայող և քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում՝ գլխավոր պաշտոններ զբաղեցնող 5 քաղաքացիական ծառայողներ: Աշխատակազմում հաշվետու ժամանակահատվածում արտամրցութային կարգով կատարվել է 2 նշանակում, քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը՝ 66 տարին լրանալու կապակցությամբ զբաղեցրած պաշտոնից ազատվել է 1 քաղաքացիական ծառայող: Ըստ հաստատված պլան-գրաֆիկի վերապատրաստման ենթակա 35 քաղաքացիական ծառայողներից վերապատրաստվել են 19-ը՝ քաղաքացիական ծառայության ծրագրերով և ՀՀ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում՝ վերապատրաստման ենթակա 11 աշխատակիցներից՝ 6-ը:

2016 թվականի տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզի ենթակայության թվով 34 պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է ֆինանսական աուդիտ /հանրահաշվական հաշվարկների ստուգում, առանձին գործառույթների իրականացման և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում դրանց արտացոլման կանոնների պահպանման ստուգում, ֆինանսական հաշվետվությունների կազմման, աշխատավարձ և դրան հավասարեցված վճարների հաշվարկման և վճարման ճշտության աուդիտ, հաշվապահական գրանցումներում՝ առաջնային փաստաթղթերում առկա տեղեկատվության արտացոլման հետազննում/, որի արդյունքում կազմվել են աուդիտորական հաշվետվություններ: Հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի վարչություն, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտի միասնական տեղեկատվական համակարգ: Հրավիրվել է մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի մեկ նիստ, քննարկվել են աուդիտորական հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ: Հաշվետու ժամանակահատվածում ներքին աուդիտի բաժնից

թվով 3 աշխատակիցներ անցել են «Ներքին աուդիտորների որակավորման բարձրացման» դասընթացներ ՀՀ ֆինանսների նախարարության «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Ֆինանսական բնագավառում մարզպետն իր լիազորությունների և իրավասությունների շրջանակներում աշխատանքներ է տարել ՀՀ պետական բյուջեից մարզպետարանին, մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպություններին, ինչպես նաև մարզպետարանի միջոցով ֆինանսավորվող բնագավառներին և ծրագրերին նախատեսված միջոցների հատկացման ուղղությամբ, սահմանված կարգով վերահսկել դրանց նպատակային օգտագործումը:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի կողմից իրականացված ծախսերը /01.07.2016թ. դրությամբ/ ունի հետևյալ պատկերը. (հազ.դրամ)

	2016թ. նախատեսված (հազ. դրամ)	2016թ. ֆինանսավորում (հազ. դրամ)	01.07.2016թ. փաստացի ծախս (հազ. դրամ)
ՀՀ Արմավիրի մարզպետարանի պահպանում	218151.7	216615.43	239871.39
Կառավարման մարմինների կարողությունների զարգացում	0	0	0
Արտասահմանյան գործուղումներ	0	0	0
Պետական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին	88034.3	88034.3	88034.3
Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում	0	0	0
Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	12890.0	9520.0	9520.0
Մշակութային միջոցառումների իրականացում	1550.0	1550.0	1550.0
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	20000.0	0	0
Նախադպրոցական (կրթություն)	50240.6	49116.3	69821.6
Հանրակրթական ուսուցում	2705210.6	2658585.8	3767826.1
Հատուկ կրթություն	102164.7	96586.6	136963.2
Ներառական կրթություն	155346.9	151155.6	216729.2
Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում	836.6	619.5	619.5
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	18130.3	18130.3	18130.3
Կրթական օբյեկտների հիմնանորոգում	27835.1	990.0	990.0
Կրթական հիմնարկների շինարարություն	0	0	0
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	0	0	0

Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթի ապահովում	150552.0	125876.2	124945.90
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	600.0	600.0	600.0
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական ապահովում	2880.0	2400.0	2400.0
Ընդամենը	**3554422.8**	**3419780.0**	**4678001.5**
Դոտացիա	2182449.7	2182449.7	2182449.7
ԸՆԴԱՄԵՆԸ	**5736872.5**	**5602229.7**	**6860451.2**

Աղյուսակ 12. Տարածքային կառավարման բնագավառում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում		
Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում		
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում	Մարզային խորհրդին առընթեր ՄԶՀ-ի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի և ՈԱԽ-երի ակտիվ գործունեություն		
Արդյունք 2.	2.1. համակարգիչների թիվը	82	59
Մարզպետարանում աշխատող աշխատակիցների գործունեության համար անհրաժեշտ ժամանակակից տեխնիկայով ապահովում	2.2. համակարգչային ցանց միացած համակարգիչների թիվը	71	51
	2.3. համակարգչային ծրագրերի թիվը	8	8

10.1.3. Խնդիրները

Բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներում նույնպես այս համակարգը ներդնելու անհրաժեշտություն, որը զգալիորեն կբարձրացնի այս մարմինների հետ աշխատելու արդյունավետությունը, կփոխվի նաև կադրերի որակական մակարդակը: Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համահունչ զարգացումը կնպաստի ողջ հանրային կառավարման համակարգի էլ ավելի առաջընթացին, մարզի և հանրապետության զարգացմանը:

10.1.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Տարածքային կառավարումը օրենսդրական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն ունի: Անհրաժեշտություն կա նաև համակարգի էլեկտրոնային կառավարման, մարզպետարանի տեխնիկական հագեցվածության ընդլայնման, կադրերի որակավորման շարունակական բարձրացման: Ատեստավորումների ընթացքում անհրաժեշտ է քաղաքացիական

ծառայողների նկատմամբ կիրառել տարբերակված մոտեցում՝ հաշվի առնելով նրանց քաղաքացիական ծառայության ստաժը, փորձը և այլն: Վաթսուն և ավելի տարիք ունեցող քաղաքացիական ծառայողներին կառաջարկեինք ազատել ատեստացիայից: Համակարգում որակյալ կադրերի արտահոսքից խուսափելու համար անհրաժեշտ է բարձր որակավորում ունեցողների նկատմամբ կիրառել դիֆերենցված մոտեցում՝ աշխատավարձերի ավելացման հարցում:

10.2. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

10.2.1. Քաղաքականության վերլուծություն

Տեղական ինքնակառավարման բնագավառի գերակայություններն են՝

1) Ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը
2) Ավարտել համայնքների սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքները
3) Նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը
4) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

Համայնքային մակարդակում բարելավելու համար անհրաժեշտ է զարգացնել համայնքային ծառայության համակարգը, ստեղծել միջհամայնքային միավորումներ և խորացնել առկա համագործակցության մակարդակը համայնքների միջև, բարցրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները, հասարակության իրազեկության աստիճանը, ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը հանրային կարևորություն ներկայացնող ծրագրերի մշակման, իրականացման և մոնիտորինգի գործընթացներում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՏԻՄ-երի գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2015թ. անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացվել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով:

2016թ. ՄԶԾ ամենակարևոր խնդիրներից մեկը ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումն է և տեղական եկամուտների հավաքագրման աճը պլանավորված մակարդակին հասնելու համար:

Քաղաքաշինության, հողաշինարարության և հողօգտագործման բնագավառներում անհրաժեշտ է ավարտին հասցնել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի փոխանցումը համայնքներին, համայնքային նշանակության հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, ինչպես նաև գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը:

Համայնքային ծառայության համակարգի սահուն ներդրումն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ՝ համայնքային ծառայողների, համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անդամների վերապատրաստում, համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալները մշտապես հավաքագրում և մուտքագրում միասնական հանրապետական շտեմարանում, համայնքային ծառայողների վարձատրման միասնական համակարգի ներդրում, համայնքի ղեկավարի աշխատակազմին ապահովելու համապատասխան սարքավորումներով, համակարգչային ծրագրերի տեղադրելուն և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական

զարգացման ծրագրի հիման վրա, 2016թ. անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա, որը կպահանջի վերապատրաստման դասընթացներ, որոնց պետք է մասնակցեն ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները: Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից:

10.2.2. Իրականացման առաջընթացը

2016թ. առաջին կիսամյակում տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության բնագավառում մարզպետի կողմից հրավիրված մարզխորհրդի նիստերը պատշաճ կազմակերպելու նպատակով ժամանակին տեղեկացվել են մարզի բոլոր համայնքների ղեկավարները, ինչպես նաև քննարկված հարցերին առնչվող մարզային և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարները:

Տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրել է անհրաժեշտ խորհրդատվություն սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման հարցերով, ինչպես նաև վերահսկել է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքը և պարտադիր լիազորությունների կատարումը, մշտական հսկողություն է իրականացվել մարզի համայնքների ավագանու նիստերի հրավիրման պարբերականության, ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, համայնքի ղեկավարի կարգադրությունների սահմանված կարգով մարզպետարան ներկայացնելու նկատմամբ և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրությանը, ինչպես նաև համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիների դիմում- բողքներին, առաջարկություններին, քաղաքացիների ընդունելություններին և նրանց կողմից բարձրացրած հարցերի օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանելուն:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում վարչական և ֆինանսական հսկողություն իրականացնելու նպատակով մարզպետի կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովների կազմում բաժնի աշխատակիցները մասնակցել են մարզի՝ Ակնալիճ, Եղեգնուտ, Արտաշար, Զարթոնք, Տարոնիկ, Քարակերտ, Լեռնագոգ, Հայկաշեն, Ոսկեհատ, Նորակերտ, Արևաշատ, Այգեշատ (Արմ.), Նոր Կեսարիա, Փշատավան, Երվանդաշատ համայնքներում իրականացված ստուգումներին: Մարզի թվով 10 համայնքներում (Այգեկ, Գայ, Փշատավան, Աղավնատուն, Առատաշեն, Գրիբոյեդով, Ջրարբի, Մրգաշատ, Այգեվան, Նորավան) նշանակվել և անցկացվել է համայնքների ղեկավարների ընտրություններ: Նոր Կեսարիա համայնքում՝ ավագանու անդամների ընտրություն: Աղավնատուն, Փշատավան և Այգեվան համայնքներում իրականացվել են ընդունման և հանձնման աշխատանքներ: Ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման միջոցառումների, ինչպես նաև ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով բաժինը մշտապես համագործակցել է համայնքների ղեկավարների, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների, ՀՀ անձնագրային և վիզաների վարչության Արմավիրի, Վաղարշապատի և Բաղրամյանի բաժանմունքների հետ:

Մեծ աշխատանքներ են իրականացվել համայնքային ծառայության բնագավառում: Պետական լիազորված մարմին է ուղարկվել մարզում համայնքի ղեկավարների որոշմամբ նշանակված համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար անցկացվելիք մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների ժամանակացույցերը, ինչպես նաև հրապարակված մրցույթների հայտարարությունների տեքստերը, ինչպես նաև նախորդ ամսվա ընթացքում անցկացված ատեստավորումների և մրցույթների արդյունքները: Պարբերաբար՝ ամիսը երկու անգամ, մարզի համայնքներից հավաքագրվել և ներկայացվել են համայնքային ծառայության պաշտոնների գրանցամատյանի տվյալները(տեղեկություններ ձև1 և ձև 2): Մշտապես մեթոդական օգնություն և պահանջվող խորհրդատվություն է տրվել

համայնքապետարանների աշխատակազմի քարտուղարներին, միաժամանակ հսկողություն է իրականացվել նշանակված մրցույթների և ատեստավորումների անցկացման նախապատրաստական աշխատանքները սահմանված կարգով կազմակերպելու նկատմամբ: Ընդգրկված լինելով համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների կազմում բաժնի մասնագետները՝ որպես հանձնաժողովի անդամներ մասնակցել են մրցույթների և ատեստավորումների: 2016թ. առաջին կիսամյակի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար տրվել է թվով 30 հայտարարություն, արդյունքում կայացել են 22 թափուր պաշտոնների մրցույթներ և հաղթող են ճանաչվել 21 պաշտոններում: Կազմակերպվել և անցկացվել է թվով 49 համայնքային ծառայողների հերթական ատեստավորում:

Աղյուսակ 13. Տեղական ինքնակառավարման բնագավառում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան, %		
Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում	2. Համայնքային մակարդակում հավաքագրվող հարկեր և տուրքեր նախորդ տարվա նկատմամբ, %		
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ	1.1.Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ (աճ պլանավորված եկամուտների նկատմամբ, %)		
Միջոցառումներ 1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2.Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:			
Արդյունք 2. Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում	2.1.Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը	97	
	2.2 Վերապատրաստում անցած և վկայականներ ստացած համայնքային ծառայողների թիվը	276	80
	2.3.Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվ և դրանց քանակի ավելացում	3	3
	2.4 Մասնագիտական որակավորում ստացած ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների թիվը	150	0
Միջոցառումներ 2.1. Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով			

2.2. Համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում			
2.3. ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով			
Արդյունք 3. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի մշակման որակի բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին **Միջոցառումներ** ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում	3.1 ՄԶԾ և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը	97	0
	3.2. ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը	97	16

10.2.3. Խնդիրները

Տարածքային կառավարման համակարգի «Խնդիրները» ենթավերնագրի տակ նշվել է, որ համակարգում ձևավորված մշակույթի առանձին տարրեր անհրաժեշտ է տարածել նաև տեղական ինքնակառավարման ոլորտում: Փաստորեն, այս երկու ոլորտներն իրականում սերտ համագործակցության մեջ են, սակայն երկու համակարգերի կառավարման բարձր արդյունավետություն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել ավելի հստակ մեխանիզմներ: Արդեն նշվել է, որ բարձր տեխնոլոգիաների արդի արագընթաց զարգացումների ֆոնի վրա առաջացել է նաև մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում նույնպես Mulberry համակարգը ներդնելու անհրաժեշտությունը:

Եթե համակարգը ներդրվի քաղաքապետարաններում ու գյուղապետարաններում, զգալիորեն կբարձրանա համայնքների հետ աշխատելու արդյունավետությունը, համայնքների ղեկավարների աշխատակազմերում կփոխվի կադրերի որակական մակարդակը, կգործարկվեն ոլորտների խնդիրների լուծման համանման եղանակներ:

10.2.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Կարելի է հետևություն անել, որ այսօր տեղական ինքնակառավարման համակարգում նույնպես շեշտադրումը հիմնականում պետք է լինի բնագավառի օրենսդրության կատարելագործման, համակարգի էլեկտրոնային կառավարման, համայնքների ղեկավարների աշխատակազմերի տեխնիկական հագեցվածության մակարդակների բարձրացման, կադրերի որակավորման շարունակական բարձրացման վրա (տեղական ինքնակառավարման համակարգում նույնպես, ի տարբերություն մասնավոր առանձին ոլորտների, աշխատակիցների վարձատրության չափը համեմատաբար ցածր է և, բնականաբար, բարձր որակավորում ունեցող կադրերի առկայությունը համակարգում պակասելու միտում ունի, իսկ մարզի գյուղական համայնքների մեծ մասում որակյալ կադրերի խիստ պակաս կա, կադրերին ներկայացվող որակական բարձր պահանջները ենթադրում են նաև բարձր աշխատավարձի առկայություն, որն իր հերթին հակադարձ կերպով նպաստելու է համայնքային ծառայողների որակավորման բարձրացմանը):

10.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

10.3.1. Քաղաքականության վերլուծություն

2016թ. ընթացքում տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) լոկալ հեռուստաընկերությունների միջոցով պարբերաբար հեռարձակել հաղորդումներ՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը.

2) մարզային թերթերում պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով համապատասխան պարզաբանումներ.

3) պատրաստել և համայնքներին առաքել հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ մարզի զարգացման ծրագրի, ինչպես նաև մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին.

4) հասարակության հետ հարաբերությունները, այդ թվում տեղեկատվության տարածումը, կազմակերպել ոչ միայն մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, այլև մարզի տարածքում գոյություն ունեցող հասարակական կազմակերպությունների ջանքերով.

5) հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

2016թ. ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) Ավարտել քաղաքային համայնքների պաշտոնական ինտերնետային էջերի ստեղծման աշխատանքները, որոնք հետագայում նախատիպ կհանդիսանան գյուղական համայնքների պաշտոնական ինտերնետային էջերի ստեղծման համար.

2) Փորձնական ծրագրեր իրականացնել մի քանի համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի հրապարակային քննարկումներ.

3) Համայնքների հնարավորություններից ելնելով՝ հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքի բյուջեի հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ և դրանք անվճար տարածել համայնքի բնակչությանը.

4) Հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին.

5) Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների մեկական օրինակ տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում.

6) Հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ.

7) Նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպը, և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցի քննարկում հանրաքվեի միջոցով:

10.3.2. Իրականացման առաջընթացը

2016թ. առաջին կիսամյակում իրականացրել է ՀՀ Արմավիրի մարզպետի, մարզպետարանի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, ծրագրեր, հայտարարություններ եւ այլ տեղեկատվական բնույթի նյութեր պատրաստելու եւ տարածելու, ինչպես նաև հարցազրույցներ կազմակերպելու և դրանց հրապարակայնությունը ապահովելու միջոցով:

Ապահովվել է մարզպետի կողմից ընդունված իրավական ակտերի հրապարակումը՝ նախապատրաստվել և մարզպետի, ինչպես նաև աշխատակազմի ղեկավարի հաստատմանն են ներկայացվել թվով 86 որոշում, թվով 55 կարգադրություն և թվով 164 հրաման: Գործնական աշխատանքներ է տարել նաև մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավար մարմինների կողմից ընդունված իրավական ակտերն ուսումնասիրելու և գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ: Մարզպետի՝ որպես մարզպետարանի ենթակայության պետական ՓԲԸ-ների ձայների 100% տնօրինող հիմնադրի, հաստատմանն է ներկայացվել արձանագրային թվով 9 որոշում: Լուրջ աշխատանքներ են տարվել նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի ուսումնասիրելու ուղղությամբ, որորց արդյունքում պատրաստվել են բազմաթիվ առարկություններ՝ առաջարկելով համայնքների ղեկավարներին օրենսդրությանը հակասող որոշումները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին: Բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է ամենօրյա աշխատանք համապատասխան աշխատակազմերի քարտուղարների հետ <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների ուսուցման, ինչպես նաև <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված իրավասությունների ուղղությամբ:

Ապահովվել է ՀՀ Արմավիրի մարզպետի եւ մարզպետարանի այլ պաշտոնատար անձանց իրազեկումը զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումների վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում ապահովվել է նաև իրականությանը չհամապատասխանող հրապարակումների հերքումը և/կամ պարզաբանումը: Օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պատասխանվել է լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ստացված գրավոր հարցումներին:

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակը եղել է կայուն: Ոլորտային ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր է եղել ապահովել բոլոր պետական կառույցների, տեղական, միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործացության, ինչպես նաև ՀՀ Նախագահի, վարչապետի, նախարարների և այլ գերատեսչությունների ղեկավարների մարզ կատարած այցելությունների և տրված հանձնարարականների կատարման արդյունքում:

Աղյուսակ 14. ՀՀ Արմավիրի մարզում համայնքների բյուջեների հրապարակայնության և համայնքներում ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Համայնքների բյուջեների հրապարակայնությունը (համայնքային բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները)			**ՀՀ համայնքներում ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացում**	
Ցուցատախտակ-ներին և տեսանելի այլ վայրերում տեղադրում	Հեռուստատեսությամբ հեռարձակում	Ինտերնետային կայք էջում տեղադրում	Գործավա-ության մատյանի առկայություն	Ավագանու աշխատանքները կազմակերպելու համար առանձնացված աշխատասենյակի առկայություն
97	**27**	**97**	**97**	**98**

Աղյուսակ 15. Քաղաքացիական հասարակության արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի

Արդյունք 1. Մարզում գործող ՀԿ-ների և ԶԼՄ-ների դերի բարձրացում **Միջոցառումներ** Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում -Բնակչության իրազեկության բարձրացում՝ հասարակական կազմակերպությունների միջոցով	1.1. Տարբեր հաղորդումների միջոցով հանրության իրազեկման հաղորդումների թիվը 1.2. Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ-ների թիվը յուրաքանչյուր համայնքում 1.3. Մարզի համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների գործընթացի լուսաբանում	250 Մարզային ԶԼՄ-ներով և մարզպետարանի պաշտոնական կայք-էջով	*3 հաղորդում /985 դիտանյութ/* - 1
Արդյունք 2. Մարզային ՀԿ-ների համատեղ աշխատանքի պլանավորում	ՀԿ-ների համատեղ գործունեության մոդելի մշակում, համատեղ իրականացվելիք ծրագրերի քննարկում և մշակում	19 14	3 3
Արդյունք 3. ՄԶԾ-ով նախատեսված նախաձեռնությունների լուսաբանում	Մարզի զարգացման ծրագրով 2015 թվականին նախատեսված աշխատանքների հանրային իրազեկում /թվով 3 ԶԼՄ-ներով մարզպետարանի կայք-էջով/		մարզպետարանի կայք-էջ

10.3.3. Խնդիրները

Անհրաժեշտ է ավելի սերտացնել համագործակցությունը մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզում գործող հասարակական կազմակերպությունների միջև, որի համար նույնպես պետք է մշակել հստակ մեխանիզմներ:

10.3.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Մարզում գործող մի շարք հասարակական կազմակերպությունների գործունեությունը բավականին արդյունավետորեն է անդրադառնում մարզի և համայնքների սոցիալ-տնտեսական առաջընթացի վրա: Մարզի կտրվածքով որոշակի համակարգման կարիք ունի՝ մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների քայլերի ներդաշնակեցման, համաձայնեցման, կրկնություններից ու ավելորդություններից խուսափելու առումով: Խնդրի լուծման համար կարելի է ստեղծել հասարակական կազմակերպությունների գործունեությունը մարզում համակարգող որևէ մարմին /ֆորում/, որի արդյունավետ գործունեության արդյունքում կարելի է ապահովել օպտիմալ լուծումներ:

11. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

11.1. Քաղաքականության վերլուծություն

Մարզում տեխնածին արտակարգ իրավիճակների ծագման հիմնական սպառնալիք են համարվում ՀԱԷԿ-ի վթարները, վտանգավոր նյութեր տեղափոխող ավտո և երկաթուղային տրանսպորտային միջոցների վթարները, քիմիական վտանգավոր օբյեկտներում առաջացած վթարները, հիդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարները, ավտովթարները, կենցաղային հրդեհները:

Մարզում տեխնածին աղետների պատճառ են հանդիսանում հիմնականում բնակչության կողմից անվտանգության կանոնների չիմացությունը և ոչ ճիշտ կիրառությունը:

Առաջին և ամենակարևոր պայմանը ռիսկերի նվազեցման գործընթացում հասարակության պատրաստվածությունն է բնական և տեխնածին աղետներին:

Գարնանային հնարավոր հեղեղումները կանխարգելելու նպատակով մարզի տարածքում պետք է կատարվեն հետևյալ միջոցառումները. հեղեղավտանգ տեղամասերի հետախուզում, վտանգավոր տեղամասերի հայտնաբերում, կանխարգելիչ աշխատանքների գնահատում, գետի հունի մաքրում և ափերի ամրացում, սելավատարի հունի մաքրում և ափերի ամրացում:

Շենքերի և շինությունների փլուզումից, հնարավոր հետևանքներից խուսափելու համար իրականացնել դրանց ամրացման աշխատանքներ:

Ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է իրականացնել վթարային կամուրջների ամրացման և վերականգնման աշխատանքներ: Ձմեռային սեզոնի համար ավազի և աղի պաշարների կուտակում, համապատասխան տեխնիկայի նախապատրաստում:

Կարկուտի հետևանքներից խուսափելու համար անհրաժեշտ է մարզի մնացած համայնքներում շարունակել հակակարկտային կետերի տեղադրման աշխատանքները:

Հրդեհների մարման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար բնակավայրերում իրականացնել հիդրանտների տեղադրում և մշտական ջրով ապահովված ջրավազանների կառուցում: Անհրաժեշտ է իրականացնել նաև կոմունալ-էներգետիկ համակարգի վթարային տեղամասերի վերականգնում:

ՄԶԾ-ով նախատեսվել է ՀԱԷԿ-ին հարակից 10կմ շառավղով տարածքում (նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման (5կմ) և շտապ պաշտպանական միջոցառումների իրականացման (5-10կմ) գոտիներ) բնակվող բնակչությանն ապահովել կալիում-յոդի հաբերով և անհատական պաշտպանական միջոցներով:

Ռիսկերի նվազեցման գործընթացում կարևորվում են սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները, մարզին սպառնացող համաճարակը, աղետների վերաբերյալ տեղեկատվական, վերլուծական, ինչպես նաև ազդարարման, իրազեկման աշխատանքների կազմակերպման և իրագործման դերը:

11.2. Իրականացման առաջընթացը

2016թ. առաջին կիսամյակի ընթացքում ապահովվել է ՀՀ ԱԻՆ, Հայաստանի փրկարարական ծառայության ՀՀ Արմավիրի մարզային փրկարարական վարչության, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության, Արմավիրի մարզային փրկարարական վարչության, տարածքային զինկոմիսարիատների, սահմանապահ 2037 ռուսական և մարզի տարածքում տեղակայված հայկական զինվորական մասերի հետ: Կազմվել և ՀՀ ԱԻՆ է ուղարկվել ԱԻ բնագավառում ՀՀ Արմավիրի մարզպետի կատարած աշխատանքների վերաբերյալ տեղեկանք: Իրականցվել է ձմեռային զորակոչի առաջին օրվա միջոցառման ապահովմանը, որը արդեն ավանդույթ դարձած շարունակվում է վերջին 7-8 տարիներին՝ նորակոչիկները բանակ են ճանապարհվում Սարդարապատի հուշահամալիրում զոհված ազատամարտիկներին հարգանքի տուրք մատուցելով, երգ-երաժշտության ուղեկցությամբ և մարզպետի կողմից նվերներ ստանալով:

Իրականացվել են մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի կազմակերպմն և ապահովմն, զորակոչից և հաշվառումից խուսափող զորակոչիկների հայտնաբերման գործնթացին, նախազորակոչային տարիքի պատանիների կցագրման, ռազմական ուսումնական հաստատություններում սովորել ցանկացողներով համալրմանը, տարածքային զինկոմիսարյատներից տեղեկատվության հավաքման աշխատանքները: Մշտական ուշադրության կենտրոնում է եղել ՀՀ կառավարության 27.05.2010թ. N 657-Ն որոշման կատարման ընթացքը, մարզի բոլոր համայնքներում և կազմակերպություններում զինվորական հավշվառման կազմակերպման նաև գրանցամատյանների ճիշտ վարման ուղղությամբ: Ակտիվ

մասնակցություն ենք ունեցել մարզում անցկացված բոլոր շտաբային ուսումնավարժությունների և ապահովել ենք մասնակիցների ներկայությունը:

Հաշվետու ժամանակահատվածում ծավալուն աշխատանք է կատարել ՌԴ մուտքի արգելք ունեցող քաղաքացիների դիմումների ձևակերպման, միգրացիոն պետական ծառայություն ուղարկման և դիմումների պատասխանները քաղաքացիներին իրազեկման գործընթացում:
Մշտապես աջակցություն է ցուցաբերվել մարզում գործող հասարարական-քաղաքական կազմակերպություններին:
2016թ. ՄԶԾ-ի կարիքների գնահատումը կազմել է 67,000.0հազ. դրամ: Ընդհանուր առմամբ 2016թ. ՄԶԾ-ով այլ աղբյուրներով իրականացվող 67,000.0հազ. դրամ ծրագրերի խնդիրը բաց է մնում՝ հնարավոր ֆինանսավորման աղբյուրներ գտնելու ակնկալիքով:

11.3. Խնդիրները

Փոփոխություններ կատարել ապահովագրական գործունեությունը համակարգող օրենսդրական դաշտում՝ հնարավորություն ստեղծելով ապահովագրելու նաև գյուղատնտեսական մթերքների արտադրության ռիսկերը արտակարգ իրավիճակների դեպքում:

11.4. Քաղած դասերը և հետագա քայլերը

Մշակել աղետների ռիսկերի, հետևանքների և կորուստների մասին վիճակագրական տեղեկատվությունների և տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմ, որի արդյունքում կձևավորվի տվյալների շտեմարան, որը հնարավորություն կտա միջազգային, տարածաշրջանային, պետական և տեղական մակարդակներով առկա տվյալների ազատ փոխանակման:

Մշակել և հաստատման ներկայացնել աղետների ռիսկի նվազեցման Արմավիրի մարզային թիմի գործողությունների ծրագիրը, որով կհստակեցվեն ինչպես թիմի գործառույթները, այնպես էլ կիրականացվեն մոնիտորինգի և գնահատման աշխատանքներ՝ կիսամյակային և տարեկան կտրվածքով:

Ստեղծել ճգնաժամային կառավարման ժամանակակից կենտրոն՝ իր տարածքային (մարզային ու համայնքային) և գերատեսչական ենթահամակարգերով, որը թույլ կտա օգտագործել տեղեկությունների հավաքման, վերլուծության և որոշումների կայացման ժամանակակից տեխնոլոգիաներն ու մեթոդները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**